

ՍԵՊԱԿԻՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԿԱՅԱՆՈՒ ԵՐԿԻՐԸ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿԱՐԱԳՅՈՅԱՆ

Խոռոհների պատմության՝ Միտանի տերության մ. թ. ա. 1270 թ. անկումից հետո Հայկական լեռնաշխարհի խուռի-ուրարտական ցեղերը երկար ժամանակ մնում են մասնատված և էական դիմադրություն չեն կարողանում կազմակերպել Ասորեստանի նվաճողական քաղաքականության դեմ¹, մինչև որ 'Իայահնու Իրկիր ստանձնում է Ասորեստանի դեմ պայքարող ցեղերի ղեկավարությունը²։

Այսպես, Թուրուլթի-Նինուրթա 1-ը (1244—1208 թթ. մ. թ. ա.)³ հիշատակում է Նաիրիի 43 արքաների (XLIII LUGALMEŠ KURNa-1-ri)⁴, այդ թվում նաև Թադուհինների⁵, որոնց դեմ իր դահակալության հենց առաջին տարում հաղթանակ տանելուց հետո⁶, Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմուտքը ենթարկում է Ասորեստանին և դարձնում հարկատու⁷ (GUN u la-mar-ta a-na UD-um ša-ti UGU-šu-nu aš-ku-un⁸, այսինքն՝ «հարկն ու տուրբը հավիտյան վրաները դրեցի»), իսկ հիշյալ արքաներին գերեվարում է իր մայրաքաղաքը՝ Աշուր, և տանջանքների ենթարկելով ստիպում է հավատարմության և րդում առաջ⁹։

Գլխախաարար, Թուրուլթի-Նինուրթա 1-ը սվյալ դեպքում չի հիշատակում ո՛չ ուրբաների (կամ Թադուհինների) և ո՛չ էլ նրանց երկրների անունները (թեև նա հիշատակում է միևնույն արշավանքի սկզբում նվաճված հինգ այլ երկրներ¹⁰, որ դառնում էին Հայկական լեռնաշխարհի և Հյուսիսային Միջագետքի միջև և սուսր ուրիշ երկրներ¹¹, որոնք տարածվում էին Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմտյան ծայրամասում), սակայն նրա հաղորդումից երևում է, որ Նուիրիի այս 43 արքաների դաշնակցությունը դեռևս չունեի այն կայունությունը, որ կարողանար դիմադրել Ասորեստանի ռազմական հզորությանը։

¹ Г. А. Мсликишвили, Наирн-Урарту, Тбилиси, 1954 (այսուհետև՝ НУ), էջ 168,

² НУ, էջ 59; Г. А. Мсликишвили, К истории древней Грузии, Тбилиси, 1959 (այսուհետև՝ ИДГ), էջ 178;

³ Э. Бикерман, Хронология Древнего Мира, М., 1975, էջ 187; Հին Արևելքի ժամանակագրությունը, ռադառոնյամբ Ուրարտուի, տալիս ենք ըստ հիշյալ աշխատության։

⁴ O. Schroeder, Keilschrifttexte aus Assur, historischen Inhalts („Wissenschaftliche Veröffentlichungen der Deutschen Orient-Gesellschaft“, Band 37., Heft II, Leipzig, 1921) (այսուհետև՝ KAI, II), № 58, II, տող 38—39;

⁵ И. М. Дьяконов, Ассиро-вавилонские источники по истории Урарту («Вестник древней истории», 1951, № 2—4) (այսուհետև՝ АВИИУ), № 7.

⁶ D. D. Luckenbill, Ancient Records of Assyria and Babylonia, I—II, Chicago, 1926—1927 (այսուհետև՝ ARAB, I կամ II), I, № 144, 165.

⁷ АВИИУ, № 3, 5, 6, 7.

⁸ КАН, II, № 58, II, տող 46—47.

⁹ АВИИУ, № 6.

¹⁰ КАН, II, № 58, I, տող 17—19.

¹¹ КАН, II, № 58, I, տող 23—26. II, տող 27—28.

Թիզլաթպալասար I-ի (1115—1077 թթ. մ. թ. ա.) գահակալությունից 50 տարի առաջ, այն է՝ մ. թ. ա. 1165 թ., Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմտյան մասերը, հատկապես հետագայի Աղձնիքի տարածքը թափանցած մուշքերի հետնորդները, թվով 20000 մարդ (որոնց նախորդել են Թուրուլթի-նինուրթա I-ի մոտ մ. թ. ա. 1244 թ. հիշատակված վերաբնակիչների մի մեծ խումբ, թվով 8 շար, այսինքն՝ 28800 մարդ, որ համարվում են Եփրատի այն կողմից, այսինքն՝ արևմտյան ափից դեպի արևելյան ափ տեղափոխված խեթեր)¹², մ. թ. ա. 1115 թ. իրենց հինգ արքաներով (ըստ Գ. Մելիքիշվիլու՝ մուշքերի հինգ տարբեր ցեղեր իրենց ցեղապետներով)¹³, ըստ Ի. Դյակոնովի՝ 20000 մուշք զինվորներ իրենց հինգ առաջնորդներով)¹⁴ լուրջ անհանգստություն են պատճառում Ասորեստանին¹⁵։ Այնուամենայնիվ, այս դաշնակցությունը ևս չի դիմանում Ասորեստանի ռազմական հզորությանը և պարտություն է կրում։ Ասորեստանի համար հաղթական այս պատերազմից հետո 6000 մուշք զորք է ընկնում Թիզլաթպալասար I-ի ձեռքը¹⁶, որը և նրանց, տիրող սովորության համաձայն, հավանաբար, վերաբնակեցնում է իր պետության այլ շրջաններում։

Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմուտքում հանդես եկած այս երկու դաշնակցությունների պարտությունից հետո (առաջինը մ. թ. ա. 1244 թ., երկրորդը մ. թ. ա. 1115 թ.), Թիզլաթպալասար I-ը մ. թ. ա. 1112 թ. ստիպված է լինում գոտեմարտի մեջ մտնելու Նաիրիի 23 երկրների մի նոր դաշնակցության դեմ¹⁷, որի առաջացումը պայմանավորված էր ոչ միայն Նաիրիի առանձին ցեղերի աստիճանական զարգացմամբ, քաղաքական միավորման անհրաժեշտությամբ, այլ նաև Ասորեստանի հնարավոր ներխուժումը կասեցնելու նկատառումով։

Եթե նախորդ երկու դաշնակցությունների կազմի մեջ մտնող արքաներից և ոչ մեկի անունը չի նշված, ապա տվյալ դեպքում, բարեբախտաբար, անվանապես հիշատակված 23 երկրներից¹⁸ մեկի՝ Դայաննուի արքան հիշատակված է անվանապես (Se-e-né LUGAL KURDa-ja-c-ni¹⁹, այսինքն՝ «Սենե արքան Դայաննուի»)։

Գ. Մելիքիշվիլու համոզիչ բացատրության համաձայն, այս երևույթը խոսում է այն բանի օգտին, որ Նաիրիի 23 երկրների մեջ Դայաննու երկրի արքան ուներ ղեկավար գիրք²⁰ և, հավանաբար, հենվում էր իր՝ համեմատաբար ընդարձակ երկրի, նշանակալից տնտեսական զորության և ռազմաքաղաքական ուժի վրա²¹։ Թերևս այդ է պատճառը, որ ավելի քան երկու և կես

¹² АВИИУ, № 6, 7.

¹³ НУ, էջ 176; ИДГ, էջ 174.

¹⁴ И. М. Дьяконов, Предыстория армянского народа, Ереван, 1968 (այսուհետև՝ ПАН), էջ 123.

¹⁵ АРАВ, I, № 221. АВИИУ, № 10 (I, տող 62 և հետո).

¹⁶ նույն տեղեկություն.

¹⁷ ПАН, էջ 125.

¹⁸ E. A. W. Budge and L. W. King, Annals of the Kings of Assyria, I. London, 1902 (այսուհետև՝ АКА), № 1, IV, տող 71—82.

¹⁹ АКА, № 1, V, տող 22.

²⁰ НУ, էջ 174; ИДГ, էջ 170.

²¹ НУ, էջ 50; ИДГ, էջ 178.

դար անց, երբ Ուրարտուի՝ որպես Հին Արևելքի պետություններից մեկի, ձախարհման շրջանում գերիշխանությունը հանձին Արամու արքայի (860—840 թթ. մ. թ. ա.) դառնում էր Արամյան հարստության ձեռքին, այնուամենայնիվ, Սալմանասար III-ը (858—824 թթ. մ. թ. ա.) Դալանու երկրի արքային նույնպես հիշատակում է անվանապես (IA-si-a LUGÁL KURDa-ja-e-ni²², այսինքն՝ «Ասիա արքան Դալանուի»):

Հետևաբար, նախորդի 23 դաշնակից երկրների գրաված տարածքի մասին մոտավոր սյուսկերացում կազմելու համար խիստ կարևոր է Թիգլաթպալասար I-ի²³ և Սալմանասար III-ի²⁴ արձանագրություններում հիշատակված Դալանու երկրի տեղորոշումը, որի վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ կան մի շարք կարծիքներ, ընդ որում, երբեմն խիստ հակասական:

Այսպես, օրինակ, Գ. Խալաթյանցը ուրարտական Դալանու երկրի անունը համեմատում է Հայաստանի Տայք նահանգի անվան հետ²⁵, Անկախ այս տեսակետից միեկնուն միտքն է հայտնում Նաե Կ. Բասմաջյանը²⁶, Այնուհետև այդ կարծիքը բնորոշվում է Կ. Լեման-Հաուպտի²⁷, Ա. Խալաթյանի²⁸, Բ. Պիոտրովիչի²⁹, Ն. Ադոնցի³⁰, Գ. Մելիքիշվիլու³¹, Մ. Սալվինիի³² և Ն. Հարությունյանի կողմից³³, Ի. Դյակոնովը թեև ուրարտական Դալանու երկիրը Հայաստանի Տայք նահանգի հետ անմիջականորեն չի համեմատում, սակայն, ուսորեստանյան աղբյուրների Դալանու և հունական աղբյուրների տառիքների (Τάυρος)³⁴ երկրի միջև նույնություն է տեսնում³⁵, ինչպես այդ անում

²² G. G. Cameron, The Annals of Shalmaneser III, King of Assyria («Sumer», vol. VI, № 1, Baghdad, 1950) (այսուհետև՝ ASKA), III, տող 43, որտեղ IA=ma, LUGÁL=šar, KURDa=KUR da, ja=a):

²³ АВНИУ, № 10, 11, 12, 13, 17.

²⁴ АВНИУ, № 27, 28, 29, 31, 32, 33. ASKA, I, տող 63, 64. III, տող 43. IV, տող 33.

²⁵ Г. А. Халатянц, О некоторых географических названиях Древней Армении в связи с данными вапских надписей («Древности Восточные», т. II, вып. II, М., 1901) (այսուհետև՝ НГПДА), էջ 126:

²⁶ Կ. Զ. Բասմաջյան, Հայ նախարարությունները րեհոաձև արձանագրությանց մեջ («Բանասեր», 1902, № 7—9) (այսուհետև՝ ՀՆԲԱՄ), էջ 316:

²⁷ C. F. Lehmann-Haupt, Armenien Einst und Jetzt, Band II, Heft 2, Berlin und Leipzig, 1931 (այսուհետև՝ АЕЈ, II, 2), էջ 702:

²⁸ Ա. Խալաթյան, Հայաստանի սեպագրական շրջանի քննական պատմություն, Երևան, 1933, էջ 24:

²⁹ Б. Б. Пиотровский, История и культура Урарту, Ереван, 1944 (այսուհետև՝ ИКУ), էջ 27: Նույնի՝ Ванское царство (Урарту), М., 1959 (այսուհետև՝ ВЦ), էջ 31:

³⁰ N. G. Adontz, Histoire d'Arménie, Paris, 1946 (այսուհետև՝ HdA), էջ 81, 300:

³¹ Г. А. Меллишвили, Днаухи (из истории Южного Закавказья в древне-восточную эпоху) («Вестник древней истории», 1950, № 4) (այսուհետև՝ ДИЮЗ), էջ 26: Նույնի՝ Урартские клинообразные надписи, М., 1960 (այսուհետև՝ УКН), էջ 424: НУ, էջ 58: ИДГ, էջ 176:

³² M. Salvini, Nalrle Ur(u)arri, Roma, 1967, էջ 67 (քարտեզ):

³³ Н. В. Арутюнян, Земледелие и скотоводство Урарту, Ереван, 1964 (այսուհետև՝ ЗСУ), էջ 170: Նույնի՝ Бнашпи (Урарту), Ереван, 1970 (այսուհետև՝ БУ), էջ 13 (ծան. 10), 148, 158 (ծան. 241), 393, 400, 404:

³⁴ Xen., Anab., IV, 4, 18. IV, 6, 5. IV, 7, 1. IV, 7, 17. V, 5, 17.

³⁵ АВНИУ, № 10, ծան. 45: ПАН, էջ 16 (ծան. 15), 120:

են նաև Ն. Ադոնցը³⁶, Բ. Պիոտրովսկին³⁷, Գ. Մելիքիշվիլին³⁸, Ն. Հարությունյանը³⁹։ Եվ եթե նկատի ունենանք, որ հունական աղբյուրների տառիչների երկիրը հետագայի Տայքն է, ինչպես ենթադրում է Հ. Հյուբշմանը⁴⁰ և որին հետևում է Կ. Լեման-Հաուպտը⁴¹, ապա, Ի. Դյակոնովը ևս փաստորեն ընդունում է Դայաենուի և Տայքի նույնությունը։

Սակայն, մեկ բան է Դայաենու երկրի անունը Տայքի կամ տառիչների երկրի անվան հետ համեմատելը, մեկ այլ բան՝ նրա աշխարհագրական դիրքի տեղորոշումը տվյալ ժամանակաշրջանում։

Այսպես, օրինակ, Բ. Տուրանը գրում է, որ Դայաենուն գտնվում էր Արածանիի հովտում⁴², թերևս Արածանիից հյուսիս, ինչպես ենթադրում է Ք. Պատկանյանը⁴³ և կամ Արածանիից հարավ, ինչպես կարծում է Հ. Մանանդյանը⁴⁴։ Ն. Ադոնցը միժարկելով Ա. Սեյսի կարծիքը, ըստ որի Դայաենուն գտնվում էր Տայքում⁴⁵ (այս տեսակետը պաշտպանում է Կ. Լեման-Հաուպտը)⁴⁶, ենթադրում է, որ այն տարածվում էր Ճապաղջուրից հյուսիս-արևելք՝ Հաշտյանքում⁴⁷։ Գ. Ղափանցյանը որոշակիորեն ճշգրտում է տվյալ տեսակետը և Դայաենուն տեղորոշում է Արածանիի միջին հոսանքների շրջանում՝ Պալու-Մանաղկերտ հատվածում կամ Ճապաղջուրից արևելք՝ Հաշտյանք-Հարք տարածության վրա⁴⁸։ Հակառակ այս կարծիքի, Գ. Մելիքիշվիլին Դայաենու երկիրը տեղորոշում է Եփրատի վերին հոսանքների շրջանում՝ Կարինից հյուսիս⁴⁹, մի տեսակետ, որը թեականորեն առաջարկել է դեռևս Մ. Շտրեքը⁵⁰։ Բ. Պիոտրովսկին Դայաենուն տեղորոշում է Արաքսի վերին հոսանքների շրջանից հյուսիս⁵¹, մոտավորապես նույն վայրում, ինչպես ենթադրել է դեռևս Վ. Բելքը⁵² և որը, ի թիվս այլ կարծիքների, նշված է Հ. Հյուբշմանի մոտ⁵³։ Ի. Դյակոնովի կարծիքով Դայաենու երկիրը տարածվում էր Եփրատի ակունքներից

³⁶ HdA, էջ 81.

³⁷ ИКУ, էջ 27. ВЦ, էջ 31.

³⁸ ДИЮЗ, էջ 27. НУ, էջ 58, 411. ИДГ, էջ 114, 176.

³⁹ БУ, էջ 13 (ծան. 10), 158 (ծան. 241), 400, 404.

⁴⁰ H. Hübshmann, Die altarmenischen Ortsnamen, Strassburg, 1904, էջ 377 (և ծան. 1), 278, 334 (ծան. 3).

⁴¹ AEJ, II, 2, էջ 791.

⁴² Б. А. Тураев, История древнего Востока, II, Л., 1935, էջ 33.

⁴³ К. П. Патканов, Ванские надписи и значение их для истории Передней Азии, СПб, 1881, էջ 132, 141.

⁴⁴ Я. А. Манандян, О некоторых спорных проблемах истории и географии древней Армении, Ереван, 1956 (այսուհետև՝ НСП), էջ 25—39.

⁴⁵ HdA, էջ 207.

⁴⁶ AEJ, II, 2, էջ 792.

⁴⁷ HdA, էջ 81.

⁴⁸ Գ. Ա. Ղափանցյան, Ուրարտուի պատմություն, Երևան, 1940 (այսուհետև՝ ՈւՊ), էջ 128, 134, 157.

⁴⁹ НУ, էջ 53, 59. ИДГ, էջ 113, 172, 176. УКН, էջ 424.

⁵⁰ Մ. Շտրեք, Հայաստան, Քրդստան և Արևմտյան Պարսկաստան բարեկական-ասորեստանեա սեպագրերու համաձայն, Վիեննա, 1904, էջ 59.

⁵¹ ВЦ, էջ 64.

⁵² V. Belck, „Verhandlungen der Berliner anthropologischen Gesellschaft“, 1901, էջ 458.

⁵³ H. Hübshmann, նշվ. աշխ., էջ 204.

կամ, ավելի էիշտ, Կարինից Հյուսիս, այն է՝ Ճորոխի ավազանում⁵⁴, փաստորեն, Սպերից Հյուսիս-արևելք, որը ընդունում է նաև ն. Հարությունյանը⁵⁵:

Այսպիսով, Դալաննու երկիրը, ըստ եղած կարծիքների, հիմնականում տեղորոշվում է Արածանիի հովտում՝ Ճապաղջուրից Հյուսիս-արևելք կամ արևելք, Կիրատի կամ Արածանիի վերին հոսանքների շրջանում՝ Կարինից Հյուսիս և կամ Ճորոխի ավազանում՝ Սպերից Հյուսիս-արևելք:

Սուրբայն, այնուամենայնիվ, նկատելի է, որ գերապատվությունը, հատկապես վերջին շրջանում, տրվում է այն կարծիքներին, որոնց համաձայն Դալաննու երկիրը տեղորոշվում է Տալքում: Դրա պատճառը այն է, որ Դալաննու (KURDaenu) երկրի անունը բավական նման է ուրարտական աղբյուրների՝ Տայրի տարածքում դանվող, ավանդական ընթերցմամբ հայտնի Դիաուի երկրի անվանը, որը, սակայն, անհրաժեշտ է սրբագրել որպես Տեյալեխե (Te-]-a-u-e-he)⁵⁶, ([Te-]-[a]-[u]-<e>-hi-[n]e-e-[d]e)⁵⁷:

Լեզվական բնութիւնը ևնթարկելով Դալաննու (KURDaenu) և Տեյալեխե (TeJauehe) տեղանունները, կարելի է դալ վերջնական եղրակացություն, թե ղրանցից որի՞ն է համապատասխանում Տալքի անունը: Անհրաժեշտ ենք համարում նշել, որ KURDaenu — Տալք ենթադրյալ ղուգահեռը առաջիմ հնարավոր չէ հիմնավորել լեզվական ոչ մի օրինաչափությամբ, ուստի կարելի է ևնթաղրել, որ այս ղուգահեռը, թերևս, պատահական նմանություն հետևանք է և, հակառակը՝ TeJauehe > Տալք անցումը հաստատվում է վերին տասիճանի ճշգրտությամբ՝ ուրարտա-հայկական հնչյունական օրենքներին համապատասխան:

Այսպիս, ևթի TeJauehe տեղանունից (ցեղանունից) հանենք ուրարտերենին հատուկ -e]e վերջածանցը, ապա կստանանք *TeJaue- ձևը, որը ենթարկվելով հիշյալ օրինաչափություններից մեկին՝ e > a(ա) անցմանը, որը լավատարր շափով ապացուցված է տարբեր հեղինակների մոտ և վերջերս ընդհանրացված է մեր կողմից⁵⁸, կմնա *Tajaue- (*Տայաւ-) ձևը: Եթե այս ձևի վրա ավելույցներ հայերենին հատուկ տեղանվանակիրտ -f հոգնակիության ցուցիչը, կստանանք *Տայաւf:

Հայերենի սլաոմական հնչյունափոխության մի քանի երևույթների ժամանակաշրջանի մասին իոսելիս, Ա. Արրահամյանը կանգ է առնում նաև ա երկրորդադարի կրած փոփոխությունների վրա: Նա գտնում է, որ եթե միջին դարերում լաղաճայնից առաջ աոկա է աւ > օ հնչյունափոխությունը, ապա հայերենի ալբուրենում նախքան օ տառի հանգես գալը, հիշյալ հնչյունափոխությունը արտահայտվել է աւ > օ անցմամբ⁵⁹: Սակայն Ա. Արրահամյանի

⁵⁴ АИИИУ, № 10, ծան. 45. № 27, ծան. 13. № 31, ծան. 6. ПАИ, էջ 120, 137, 153.

⁵⁵ ИУ, էջ 43, 48, 51, 126, 135, 147—148.

⁵⁶ УКИ, № 36, տող 13 (որտեղ Te-di, l=1. u=u, he=h):

⁵⁷ УКИ, № 128, А1, տող 17 (որտեղ Te=di, l=1, u=1, [n]e=[n]i. [d]e=di, <e>-ն անհրաժեշտաբար ավելացվում է մեր կողմից):

⁵⁸ О. О. Карагезян, Локализация урартского царского города Арцашху (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1976, № 5 (այսուհետև՝ ЛУИГА), էջ 69—73.

⁵⁹ Ա. Ա. Արրահամյան, Փաստեր հայերենի պատմական հնչյունափոխության մի քանի երևույթների ժամանակաշրջանի վերաբերյալ (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», (հաս. գիտ.), 1957, № 4, էջ 76).

ենթադրությամբ թեև տվյալ հնչյունափոխությունը հայերենում հանդես է եկել բավական վաղ, բայց ոչ նախագրային շրջանում⁶⁰։ Մեր կարծիքով, ավելի իրավացի է Ն. Մառը, երբ ենթադրում է, որ հայերենում նման հնչյունափոխություն եղել է նաև նախագրային շրջանում⁶¹։

Այս կարծիքը հաստատող օրինակներից մեկը հենց *Տալաւֆ ձևն է, որը աւ>ռ հնչյունափոխությամբ կարող էր տալ *Տալաֆ։

Հայտնի է, որ հայերենում, նախագրային շրջանում, բառի ուղղական հոլովը կազմվել է շեշտը նախավերջին վանկի ձայնավորի վրա դնելով։ Այդ իսկ պատճառով էլ բառավերջի ձայնավորը անշեշտ մնալով սղվել է⁶²։

Խոսելով շեշտի ունեցած նման գերի մասին, Վ. Առաքելյանը հիշատակում է մի խումբ բառեր, որոնցից է *ալսածամ բառից շեշտադուրկ ա-ի անկումով առաջացած ալծմ բառը⁶³, հավանաբար, *ալսածամ>*ալսծմ>*ալլծմ>ալլծմ անցումով։ Հետևաբար, նախագրային շրջանում մենք ունեցել ենք *սեւման, *կոլման, *հիման բառեր, որոնցից վերջին անշեշտ ձայնավորի՝ ուղղական հոլովում ընկնելու պատճառով հետագայում ստացվել են սեւման, կոլման, հիման բառերը, որոնք, սակայն, սեռական հոլովում (որը կազմվել է շեշտը նախավերջին վանկի ձայնավորից վերջին վանկի ձայնավորի վրա տեղափոխելու եղանակով) վերականգնելով կորցրած ձայնավորը, հանդես են եկել որպես սեւմա՛ն, կոլմա՛ն, հիմա՛ն⁶⁴։

Հայերենի ուղղական և սեռական հոլովները շեշտով կազմվելու այս օրինաչափությունն է ահա, որ նկատելի է վերոհիշյալ *Տալաֆ ձևում, որը ուղղական հոլովում հանդես գալով որպես *Տալաֆ, հետագայում կորցրել է շեշտադուրկ ուն (այսինքն՝ աւ>ռ հնչյունափոխությամբ առաջացած ձայնավորը) և դարձել է Տալաֆ, ինչպես որ վկայված է⁶⁵, բայց սեռական հոլովում շեշտը տեղափոխվելով ընկած ձայնավորի տեղը, վերականգնել է այն և հոգնակի թվի նույն հոլովի -ց ցուցիչի հետ միասին տվել է Տալաֆ ձևը, որը նույնպես վկայված է⁶⁶։

Բարբախտաբար, I Tελαυεηε>Տալաֆ երկրի բնիկները հիշատակված են նաև հունական աղբյուրներում Τάοχοι ձևով⁶⁷։ Քննության առնելով այս ցեղանունը, տեսնում ենք, որ նրա վերջին -οι մասնիկը ածանց է (հոգնակիության ցուցիչ), իսկ Τάοχ- ձևի մեջ χ-ն ոչ թե ուրարտերենի -eļje ածանցի է, ինչպես կարելի էր կարծել առաջին հայացքից, այլ հայերենի հոգնակիության ցուցիչ -հի արտացոլումը հունարենում՝ այսինքն՝ հակադարձ երևույթը այն իրողության, երբ հունարեն χ-ն հայերենում հանդես է գալիս որպես ֆ, ինչպես՝ χαρτουλαριος «քարտուղար», χιλιαρα «ոհ-

⁶⁰ Նույն տեղում, էջ 74։

⁶¹ Н. Я. Марр, Грамматика древнеармянского языка, СПб, 1903, էջ 10, ծան. 2։

⁶² Մ. Խ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1931, էջ 108։

⁶³ Վ. Դ. Առաքելյան, Ժամանակակից հայերենի հնչյունաբանություն, Երևան, 1955, էջ 59։

⁶⁴ Նույն տեղում, էջ 59։

⁶⁵ Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963 (այսուհետև՝ ՀԲԱ), էջ 106, 110։

⁶⁶ «Մոլոսիսի Խորենացու Պատմության Հայոց», Աշխատութեամբ Մ. Արեղյան և Ս. Յարութիւնեան, Տփղիս, 1913, էջ 108, 313։

⁶⁷ Xen., Anab., IV. 4, 18. IV, 6, 5. IV, 7, 1. IV, 7, 17. V, 7, 17.

մեռն, ԴԻՄԻՏՐՈՍ Երզնկացի և այլն: Որ հայերենի Բ-ն հունարենում կարող էր հանդես գալ որպես չ, երևում է նաև նրանից, որ պարսկերենի *klmya* բառը, որը հայերենում հանդես է գալիս որպես ֆիմիա, հունարենում հանդիպում է չափա: շեուֆ: Սակայն, ամենից դիպուկը Մեծ Հայքի Կորդուք դավառի անունն ⁶⁸։ որը հունարենում վկայված է որպես ցեղանուն՝ *Kardukos*⁶⁹, համապատասխան *ka* > *a* (*n* > *a*) հնչյունափոխությամբ, որ հատուկ է հնդեվրոպական մի թանի լեզուների, այդ թվում նաև հայերենին⁷⁰, *f* > *χ* անցումով, որը հատուկ է հունարենին և հունարենի -οι հոգնակիության ցուցիչով:

Հևահարար, կարելի է ասել, որ հունարենով վկայված *Tax-* ձևը կիսաձայն 1-ի անկումով ծաղում է հայերենի *Տա՛յոֆ ձևից՝ հունարենում չվկայված նրա **Tax-* տարբերակից, քանի որ հունարենում երկու ձայնավոր հնչյուններ կարող են ձուլվել և տալ մեկ ձայնավոր, որոնց թվում նաև *a + i = e*⁷¹։ Օրինակ, *ἰστίον-ἰστίον* «մահացու», *εἰς τὴν ἀμύλην*⁷², *καὶ αὐτὸν καὶ αὐτὸν* «միմյուր», *καὶ αὐτὸν καὶ αὐτὸν* «հոսել», *καὶ αὐτὸν καὶ αὐτὸν*⁷³, *καὶ αὐτὸν καὶ αὐτὸν* «բարեփոխ», «փառապանծ»⁷⁴ և այլն: Ուստի, *Ἰταυρεῖς* > *Տա՛յուֆ > *Տա՛յոֆ (**Tax-* > **Iax-*) > Տա՛յոֆ (Տա՛յոֆ) անցումը միանգամայն բնական է և օրինալի:

Տեղին նկատենք, որ Տալքի վրացերեն անվանումը որպես (*Tao* (Տաո))⁷⁵ միանգամայն բացատրելի է հայերենի օրինալափոխությունների հիման վրա, քանի որ այնտեղ առկա բառավերջի *o* (ո) հնչյունը հայերենի օրինալափոխությունների հետևանքով առաջացած *ai* > *a* հնչյունն է, իսկ **Tayok* (*Տա՛յոֆ) > *Tao* (Տաո) անցումը օրինալի է այն պատճառով, որ այնտեղ գիտակցաբար բաց է թողնվել հայերենի հոգնակիության ցուցիչ Բ-ն, իսկ երկու ձայնավորների միջև գտնվող յ-ն ընկել է վրացերենին հատուկ լեզվական օրինալափոխությունների հետևանքով, որը նկատելի է նաև հայերենից կատարված այլ փոխառություններում: Օրինակ՝ հայ. *Hayk* (Հայկ)⁷⁶ > վրաց. (**Hayos*) > *Iaos* (ձաոս)⁷⁷ և այլն: Միևնույն երևույթը նկատելի է նաև այն դեպքում, երբ հայերենում երկու ձայնավորների միջև գտնվող Բ-ն հնչյունափոխվելով յ-ի (համա. բարբառային՝ Անաֆիտ > Անաֆիտ, Սանաֆին > Սանաֆին և այլ ձևեր, ինչպես նաև զրաբարյան հինգ-յիսուհ և նման անցումներ) վրացերենում դարձյալ ընկնում է: Օրինակ՝ հայ. *Arlahan* (Արտահան)⁷⁸

⁶⁸ Հ. Հ. Աճառյան, Հայերենի արմատական բառարան, VI, Երևան, 1931, էջ 1431, 1477, 1487:

⁶⁹ Նույն տեղում, էջ 1478:

⁷⁰ Մոզես Խորենացի, էջ 45, 211 և այլ պատմիչների մոտ:

⁷¹ Xen., Anab., IV, 1, 8—11. IV, 3, 24. IV, 3, 27. IV, 3, 30 և այլուր:

⁷² *ἰστίον*, էջ 82—83:

⁷³ И. Х. Дворецкий, Древнегреческо-русский словарь, I—II, М., 1958, էջ 1819:

⁷⁴ Նույն տեղում, էջ 399:

⁷⁵ Նույն տեղում, էջ 858:

⁷⁶ Նույն տեղում, էջ 1119 և 1123:

⁷⁷ Նույն տեղում, էջ 1764:

⁷⁸ «Картлис цховреба (История Грузии)», I—II, Тбилиси, 1955—1959 (այսուհետև՝ *КЦ*, I կամ II), I, էջ 4, 48, 244, 271, 274 և այլն. II, էջ 178, 187, 213, 270, 273 և այլն:

⁷⁹ Մոզես Խորենացի, էջ 19 և հետո, ինչպես նաև այլ պատմիչների մոտ:

⁸⁰ *КЦ*, I, էջ 4, 6, 7. II, էջ 2:

⁸¹ ՀՀԱ, էջ 104, 110:

(գավառ Գուգարքում, որի անունը, բնականաբար, ծագում է համանուն բնակավայր-կենտրոնի անունից) > *Artayan (*Արտայան) > վրաց. Artiani (არტიანი)⁸², քաղաք, որն աստիճանաբար դառնում է նույնիսկ Artani (არტანი)⁸³ հանդես գալով նաև որպես գավառ⁸⁴, ինչպես հայկական աղբյուրներում:

Հետևաբար, ITejauehe > Տայֆ զուգահեռը եթե հաստատվում է ինչպես պատմաաշխարհագրական, այնպես էլ ուրարտա-հայկական հնչյունական օրինաչափություններով և հունարենում ու վրացերենում առկա համապատասխան ձևերով, ապա KURDaJaenu > Տայֆ անցումը կարելի է բացատրել ոչ միայն այն պատճառով, որ նման անցումը լեզվական օրինաչափություններով հնարավոր չէ հաստատել, այլ նաև նրանով, որ KURDaJaenu- ITejauehe զուգահեռը ևս ժխտվում է նույն պատճառարանությունների հիման վրա: Ուստի և Դայաենու (KURDaJaenu) երկիրը Ճորոխի ավազանում տեղորոշելը հակասում է պատմաաշխարհագրական և լեզվական օրինաչափությունների տվյալներին և, այդ իսկ պատճառով, անհրաժեշտ է այն տեղորոշել այլ վայրում:

Նկատենք նաև, որ Դայաենու (KURDaJaenu) երկրի անունը դեռևս լուրջ քննության չի ենթարկվել: Միայն Ի. Դյակոնովն է, որ բացատրել է տվյալ տեղանվան տարբեր ձևերի ածանցները և հատկապես հնչյունափոխական երևույթները: Նա գտնում է, որ Դայաենու (KURDaJaenu) երկրի հանդես գալը որպես տառիների (Ταοχοι) երկիր կամ Տայք, այն է՝ բառասկզբի d > է հնչյունափոխությամբ, բացատրվում է միայն խուռերենի տվյալներով, քանի որ հենց խուռերենում է, որ հանդիպում է նման հնչյունափոխություն⁸⁵, Սակայն, նկատի ունենալով այն հանգամանքը, որ ուրարտական շրջանում խուռերենը արդեն գոյություն չունի և նման հնչյունափոխություն կատարվել չէր կարող, Ի. Դյակոնովը այդ ամենը բացատրում է նրանով, որ գուցե Դայաենու երկրում դեռևս կար խուռերենով խոսող բնակչություն, որը և կարող էր նման հնչյունափոխության պատճառ հանդիսանալ⁸⁶:

Այս տեսակետը կարելի էր ճիշտ համարել, եթե հնարավոր լիներ Դայաենու երկիրը իրոք տեղորոշել Տայքում և իսկապես համոզված լինել, որ Ճորոխի ավազանը բնակեցված էր խուռիներով: Ինչ վերաբերում է Դայաենուի (եթե այն Տայքն է) խուռիներով բնակեցված լինելուն⁸⁷, ապա բերված փաստերը⁸⁸ պատկանում են «թափառող» բառերի շարքին և տեղայնացված բնույթ չեն կրում, ուստի այդ ենթադրությունը համոզիչ համարել չենք կարող: Եվ քանի որ KURDaJaenu—Տայֆ անցումն էլ մանրազնին լեզվական ուսումնասիրության չի ենթարկվել, այլ տուրք է տրվել միայն այդ տեղանունների արտաքին որոշ նմանությանը, ապա այս կարծիքը ևս անընդունելի է, մասնավորապես որ KURDaJaenu-ITejauehe զուգահեռը ևս խիստ կասկածելի է:

⁸² КЦ, I, էջ 257 (ծան. 14), 285 (ծան. 9),

⁸³ КЦ, I, էջ 10, 24, 44, 49, 251, 257, 285, 288, 317, 379, 383,

⁸⁴ КЦ, II, էջ 178, 187, 292, 304, 322, 500, 505, 522,

⁸⁵ ПАН, էջ 16 (ծան. 15),

⁸⁶ նույն տեղում,

⁸⁷ НУ, էջ 111,

⁸⁸ ИДГ, էջ 176—178,

Բարեբախտաբար, ինչպես տեսանք վերևում, Դայանու երկիրը Ն. Աղոն-
ցր դիտում էր որպես Արածանիի ստորին հոսանքների շրջանում՝ Ճապաղ-
ջուրից հյուսիս-արևելք՝ Հաշտյանքում գտնվող մի երկիր⁸⁹, որը Գ. Ղա-
փանցյանը տեղորոշում էր Ճապաղջուրից արևելք⁹⁰, մի տեսակետ, որը այն-
քան էլ անհավանական չէ, մանավանդ որ մյուս տեսակետի կողմնակիցների
կատարած տեղորոշումը և տեղանվան մեջ հանդիպող հնչյունափոխական
երևույթների բացատրությունը որոշ դեպքերում խիստ խոցելի են և արժա-
նահավատ լինելու չեն կարող։ Փորձենք մեր ասածը հիմնավորել սկզբնաղբյուր-
ների ավայաներով և լեզվական օրինաչափություններով։

Ասորեստանյան աղբյուրների Դայանու երկիրը առաջին անգամ հիշա-
տակվում է Թիղթաթալասար I-ի շորորոգ արշավանքի ժամանակ⁹¹, մ. թ. ա.
1112 թ.։ Այդ արշավանքի ընթացքում Թիղթաթալասար I-ը անցնում է 16 լեռ
և նիրառ (ավայլ գետում Արածանի) գետը⁹² (ընդ որում, նրա միջին հո-
սանքների շրջանում, քանի որ ինչպես ասորեստանյան, այնպես էլ անտիկ
և հայկական աղբյուրներում Արածանին նվիրառ է կոչվել հենց այդ շրջա-
նում, ինչպես կոեսնենք ստորև), որից անմիջապես հետո նշվում է, որ Նաի-
րիի 23 դաշնակից արքաներ իրենց երկրներում պատրաստելով մարտակառ-
քերն ու զորքեր, ևնում ևն նրա դեմ⁹³։ Սակայն, Թիղթաթալասար I-ը ինչ-
պես հիշյալ 23 երկրների արքաներին, այնպես էլ Նաիրիի 60 այլ արքաների
և անգամ սրանց օգնության հասածներին, որոնց թիվը չի նշված, հալածում է
մինչև Վերին ծովը⁹⁴, որը, սովորաբար, համարվում է Վանա լիճը⁹⁵։

Սակայն, Ի. Դյակոնովը նկատում է, որ հիշյալ Վերին ծովը ոչ թե Վա-
նա լիճն է, այլ Սև ծովը, քանի որ Ասորեստանից մինչև Վանա լիճն ընկած
տարածության վրա հաղիվ թե 16 լեռ (այսինքն՝ լեռնանցք) լինելը⁹⁶։ Գ. Մե-
լիքիշվիլին միանգամայն իրավացիորեն վիճարկում է այս տեսակետը, գտնե-
լով, որ Վերին ծովը թերեւս կարող է Սև ծովը լինել, բայց Թիղթաթալասար I-ը
նշում է միայն իր արշավանքի ուղղությունը և ոչ թե իր՝ Սև ծով հասած լի-
նիլը⁹⁷, սակայն, ևնթաղում է, որ հիշյալ բոլոր 16 լեռներն էլ գտնվում են
նվիրառից (այսինքն՝ Արածանիից) հարավ⁹⁸ (մի կարծիք, որն ավելի վաղ
արտահայտվել է Ն. Աղոնցը)⁹⁹ և իրավացիորեն նկատում է, որ ճակատամարտը
աեղի է ունեցել հենց Արածանիի հովտում, Վանա լճից հյուսիս ընկած տա-
րածություններում¹⁰⁰, թերևս Մանադկերտից արևմուտք, ինչպես ժամանա-

⁸⁹ Ibid, էջ 81։

⁹⁰ ՈւՊ, էջ 157։

⁹¹ АВВМНУ, № 10 (IV, տող 43 և հետո)։

⁹² ՈւՊ, էջ 125։ НУ, էջ 170։ НСН, էջ 18։ ВЦ, էջ 46։ БУ, էջ 45, ծան. 140։

⁹³ АВВМНУ, № 10 (IV, տող 43 և հետո)։

⁹⁴ Նույն տեղում։

⁹⁵ ՈւՊ, էջ 125։

⁹⁶ АВВМНУ, № 10, ծան. 45։

⁹⁷ НУ, էջ 171 և ծան. 3։

⁹⁸ Նույն տեղում, էջ 170։

⁹⁹ Ն. Գ. Աղոնց, Հայաստանի պատմություն, Երևան, 1972 (այսուհետև՝ ՀՊ), էջ 58։

¹⁰⁰ НУ, էջ 176։

կին ենթադրել է Կ. Լեման-Հաուպտը¹⁰¹, որը հետազայում ընդունել են ինչպես շատերը, այնպես էլ Գ. Ղափանցյանը¹⁰²:

Տեղին նշենք, որ Թիզլաթպալասար I-ի մոտ նշված Վերին ծովը¹⁰³ (թեկուզ այն կոչվի նույնիսկ Արևմուտքի Վերին ծով)¹⁰⁴, տվյալ դեպքում Վանա լիճն է, քանի որ այն հենց միևնույն ձևով Վերին ծով է կոչվում ինչպես Թուրքութի-Նինուրթա I-ի¹⁰⁵ (1244—1208 թթ. մ. թ. ա.), այնպես էլ Սալմանասար III-ի (858—824 թթ. մ. թ. ա.) մոտ¹⁰⁶, միանգամայն տարբերվելով Թիզլաթպալասար I-ի (1115—1077 թթ. մ. թ. ա.) հիշատակած Արևմուտքի Մեծ ծովից¹⁰⁷, որը Աշուրնափրապալ II-ի (883—859 թթ. մ. թ. ա.) մոտ կոչվում է նույնպես Մեծ ծով¹⁰⁸ և հանդիսանում է Միջերկրական ծովը¹⁰⁹, բացառությամբ Շամշի-Ազադ V-ի (823—811 թթ. մ. թ. ա.) հիշատակած Արևմուտքի ծովից¹¹⁰, որը Կասպից ծովն է, քանի որ ասորեստանցիների պատկերացմամբ այն կապ ունենր Միջերկրական ծովի հետ, ուստի կրելու էր միևնույն անունը¹¹¹:

Սեպագիր աղբյուրների հիշատակած ծովերի անունները հաճախ բավական չեն նրանց ճիշտ տեղագրությունը իմանալու համար: Անհրաժեշտ է այդ անունները դիտել կոնկրետ պայմաններում: Արդեն նշեցինք, որ Մեջերկրական ծովը սեպագիր աղբյուրներում կոչվել է Մեծ ծով. բայց զա չի խանգարել, որ Թիզլաթպալասար I-ը Մանազկերտի մոտակայքում կանգնեցրած իր արձանագրության մեջ նույնպես հիշատակի մի Մեծ ծով¹¹², որը, ինչպես պնդում է Ի. Դյակոնովը, Վանա լիճն է¹¹³: Վերջերս Մ. Գավուքչյանը անդրադառնալով այս հարցին, բազմաթիվ այլ փաստերի հիման վրա ապացուցեց, որ Թիզլաթպալասար I-ի հիշատակած Վերին ծովը, իրոք, Վանա լիճն է¹¹⁴:

Հետևաբար, եթե Նաիրիի 23 երկրներից Դալանուն հիշատակվում է ամենից վերջը, ապա այն հեռու չպետք է լինի Վերին ծովի (այսինքն՝ Վանա լճի) շրջակայքից: Թիզլաթպալասար I-ի երկու այլ արձանագրություն, թվում է, թե հաստատում են այս տեսակետը: Այսպես, օրինակ, Թիզլաթպալասար I-ը նշում է, որ ընկճել է Նաիրիի երկրները, մեր ընթերցմամբ՝ Ուդումեից մինչև Դալանուն, այսինքն՝ նրանց միջև ընկած վայրերը, այն է՝ Խիմուս, Պաիթևու և Խաբխու¹¹⁵ (III-šu a-na KURKURMEŠ Na-i-ri lu-ū al-lik KURKURMEŠ Na-i-ri iš-tu KURU+du-me a-di KURDa-ja-e-ni KURHi-mu-a KURPa-i-te-ri

¹⁰¹ AEJ, II, 1, էջ 115, 116.

¹⁰² ՈւՊ, էջ 125.

¹⁰³ АВНІУ, № 10 (IV, տող 43 և հետո), № 13.

¹⁰⁴ АВНІУ, № 10 (IV, տող 39 և հետո), № 15.

¹⁰⁵ АВНІУ, № 3, 7, 9.

¹⁰⁶ АВНІУ, № 31.

¹⁰⁷ АВНІУ, № 16.

¹⁰⁸ АВНІУ, № 24.

¹⁰⁹ АВНІУ, № 16, ծան. 1.

¹¹⁰ АВНІУ, № 34.

¹¹¹ АВНІУ, № 34, ծան. 7.

¹¹² АВНІУ, № 17.

¹¹³ ПАН, էջ 127, ծան. 128.

¹¹⁴ Մ. Գավուքչյան, «Վերին ծովի» տեղագրությունը (ՀՄՄՀ ԳԱ «Լրաբեր», 1977, № 2, էջ 94—98).

¹¹⁵ АВНІУ, № 11, 12.

և KURHab-ի և-ն ak-sud¹¹⁶, այսինքն՝ «երիցս դեպի նաիրի երկրները, իրոք, արշավեցի. նաիրի երկրները Ուղումեից մինչև Դայանու՝ Խիմուա, Պաիթերու և Խարխու, իրոք, նվաճեցի»։ DAGALMEŠ KURKUR-ES Na-i-ri Is-tu KURU—du-mi: a-ri KUR[Ja-Ja-e-ri] KURHJi-mu-a KURPa-I-te-ri և KURHab-ի և ak-sud¹¹⁷, այսինքն՝ «նդարձակ նաիրի երկրները Ուղումեից մինչև Դայանու՝ Խիմուա, Պաիթերու և Խարխու, իրոք, նվաճեցի»), որոնք գտնվում են Արածանիի ստորին հոսանքների շրջանից մինչև Վանա լճի արևմտյան մասերն ընկած տարածության վրա¹¹⁸։ Այսպիսով, Դայանուն, որ հիշատակված է 23 երկրների շարքում ամենից վերջը, գտնվելու է Արածանիի ավազանում. բայց ոչ ավելի հյուսիս։

Նշենք նաև մեկ այլ փաստ. Թիզլաթպալասար I-ը նույն արշավանքի ընթացքում հասնում է խանիդարայան Մելիտու (URUMeliṣu), տվյալ դեպքում՝ Մելիտիա (URUMeliṣia) քաղաքը¹¹⁹, Ի. Դյակոնովը ենթադրում է, որ տվյալ Մելիտու (URUMeliṣu) քաղաքը խեթական Մալ(ա)տիա (URUMa-al-ti-ia)¹²⁰ կամ ուրարտական ազդյութների Մելիտիա (URUMe-le-ṣi-a-né)¹²¹ քաղաքն է, Սիրատից արևմուտք, Արածանիի գետաբերանի դիմաց¹²², մի կարծիք, որ արտահայտել է դեռևս Ն. Ադոնցը¹²³ և որին համամիտ են Գ. Մե-լիքիշվիլին¹²⁴, Բ. Պիոտրովսկին¹²⁵, Ն. Հարությունյանը¹²⁶։ Այս իսկ պատճառով էլ Ի. Դյակոնովը ենթադրում է, որ Թիզլաթպալասար I-ը այստեղ կարող էր հասնել Ճորոխի ավազանում գտնվող Դայանուից, բայց ոչ երբեք Վանա լճի մոտերքից¹²⁷, այսինքն՝ նա վերադարձի ճանապարհին իզուր այդքան հեռու չլր զնա և Վանա լճի արևմտյան մասերով՝ ավելի կարճ ճանապարհով, կիջնելու Ասորեստան. Ն. Հարությունյանը հենվելով Ի. Դյակոնովի այն կարծիքի վրա, ըստ որի Թիզլաթպալասար I-ը, հավանաբար, Ասորեստանի տիրաներից միակն էր, որ հասել էր մինչև Սև ծով (ներկայիս Բաթումի մոտակայքում¹²⁸), դժուար է նրա արշավուղին՝ Կարին—Բարերդ—Տրապիզոն, իսկ վերադարձի ուղին՝ Կերտսուն—Շապին Կարահիսար... Սևրաստիա... Մալաթիա¹²⁹, թեև ժամանակին Ն. Ադոնցը նկատել է, որ Թիզլաթպալասար I-ի՝ Սև ծով հասնելու մասին եղած ենթադրությունները չափազանցություններ են¹³⁰, Հ. Մանտեպլյունը նշել է, որ նման կարծիքները, անկասկած, պետք է մերժել¹³¹, իսկ Գ. Մելիքիշվիլին համոզված է, որ Թիզլաթպալասար I-ը պարզա-

¹¹⁶ KAI, II, № 71, տող 3—5, Մեր առաջարկած u+du կցագիրը սեպագրագետների կողմից զիջվում է որպես im₄)։

¹¹⁷ KAI, II, № 68, տող 10—12։

¹¹⁸ ПАН, էջ 52—53, 88, 126 (ծան. 127-ի շարունակությունը), 127։

¹¹⁹ АВНУ, № 10 (IV, տող 33 և հետո, որտեղ me=mi, li=di)։

¹²⁰ KUB, XIII, № 72, Rs, տող 37։

¹²¹ YKI, № 127, II, տող 16 (որտեղ le=li, li=le, né=ni) և այլուր։

¹²² АВНУ, № 10, ծան. 62. ПАН, էջ 128։

¹²³ ЗМ, էջ 59, 351—352։

¹²⁴ ИУ, էջ 176։

¹²⁵ ВД, էջ 31։

¹²⁶ ВУ, էջ 46։

¹²⁷ АВНУ, № 10, ծան. 45։

¹²⁸ АВНУ, № 10, ծան. 45. ПАН, էջ 125—126։

¹²⁹ ВУ, էջ 46։

¹³⁰ ЗМ, էջ 59։

¹³¹ ИС, էջ 18։

պես նշել է թշնամիներին հալածելու ուղղությունը, բայց ոչ երբեք նրանց հալածելով հասել մինչև Սև ծով, որն այնքան էլ հեշտ գործ չէր¹³², քանի որ հաղթանակած ասորեստանյան բանակը ծանրաբեռնված էր հափշտակված ձիերի երամակներով, անասունների հոտերով, հարուստ ավարով և, իհարկե, նաև գերիներով¹³³։ Այս պայմաններում Ասորեստան վերադառնալու փոխարեն դեպի Սև ծով շարժվելը ռազմական տեսակետից միանգամայն անթույլատրելի կլիներ։

Եվ իրոք, Թիգլաթպալասար I-ը այսքան երկար ճանապարհ անցնելու կարիք չուներ, քանի որ նա վերադարձի ճանապարհին հասել է ոչ թե խեթական աղբյուրների Մալատիա (URUMal(a)ia) կամ ուրարտական աղբյուրների Մելիտիա (URUMeleia) քաղաքը, այլ Մելիտու—Մելիտիա (URUMelitu, URUMelitia), որը, ինչպես տեսանք, կոչված է «խանիգալբայան»¹³⁴։

Հայտնի է, որ խանիգալբայ Միտանին է¹³⁵ կամ ավելի շուտ նույն տարածքում Միտանիին փոխարինած մի երկիր՝ խանիգալբայ անունով¹³⁶, որը մոտավորապես մ. թ. ա. 1270 թ. ոչնչացվում է Սալմանասար I-ի (1274—1245 թթ. մ. թ. ա.) կողմից¹³⁷։

Թիգլաթպալասար I-ի ժամանակ խանիգալբայը ընդգրկում էր Հյուսիսային Միջագետքը¹³⁸, իսկ Սալմանասար III-ի օրոք՝ Հյուսիսային Միջագետքի կենտրոնական մասը¹³⁹։ Ի. Դյակոնովը ենթադրում է, որ խանիգալբայի (այսինքն՝ Շուբարտուի) բնիկները, այն է՝ խուռիները, տարածված էին նաև Հայկական լեռնաշխարհի արևմտյան մասում¹⁴⁰։ Եվ քանի որ հիշյալ «խանիգալբայան» տերմինը, փաստորեն, նշանակում է «խուռիական», ապա կարելի է եզրակացնել, որ Մելիտու քաղաքը գտնվել է Հայկական լեռնաշխարհի սահմաններում և, ամենայն հավանականությամբ, Արածանիի միջին հոսանքների մոտակայքում։ Իսկ ինչ վերաբերում է Եփրատից արևմուտք գտնվող անվանապես համանման քաղաքին (խեթ. Մալատիա, ուրարտ. Մելիտիա), ապա այն երբեք էլ խուռիական չի եղել, մանավանդ որ Թիգլաթպալասար I-ը խեթական Մալատիան «խանիգալբայան» Մելիտուից (Մելիտիայից) տարբերելու համար այն անվանում է «խեթական մեծ (երկիր)» քաղաք¹⁴¹։ Հետևաբար, խանիգալբայան, այն է՝ խուռիական, կարող էր լինել որևէ մի քաղաք, եթե այն գտնվեր Եփրատից արևելք, Արածանիի հովտում։ Այս իսկ պատճառով էլ Ի. Դյակոնովը որոշ կասկածներ է հայտնում հիշյալ քաղաքի գոյության մասին Եփրատից արևմուտք, ենթադրելով, որ այն գուցե խեթական համանուն քաղաքի արվարձանն է Եփրատի արևելյան ափին կամ խանիգալբայան է կոչվում նրա համար, որ այն սկզբնապես պատկանել է Միտանիին, կամ թերևս գտնվել է միտանական ծագման իշխանական տան

¹³² НУ, էջ 171.

¹³³ АВИИУ, № 10 (IV, տող 43 և հետո).

¹³⁴ АВИИУ, № 10 (V, տող 33 և հետո).

¹³⁵ ПАН, էջ 44.

¹³⁶ И. Фридрих, Дешифровка забытых письменностей и языков, М., 1961, էջ 47.

¹³⁷ АВИИУ, № 2. И. М. Дьяконов, Языки древней Передней Азии, М., 1967 (այսուհետև՝ ЯДПА), էջ 115.

¹³⁸ АВИИУ, № 1, ծան. 6. № 10, ծան. 25. № 18, ծան. 9. № 40a, ծան. 3.

¹³⁹ АВИИУ, № 23, ծան. 50. № 26, ծան. 55.

¹⁴⁰ АВИИУ, № 1, ծան. 6.

¹⁴¹ АВИИУ, № 11.

տիրապետության տակ¹⁴², կարծիքներ, որոնք հիմնավորել հնարավոր չէ։ Փաստերից չբխող այս կարծիքները հանգեցնում են նրան, որ Ս. Երեմյանի՝ ուշադրության արժանի այն տեսակետը, ըստ որի հիշյալ խանիզալքայան թաղարք կարևոր է տեղորոշել Արածանի միջին հոսանքների և Վանա լճի միջև¹⁴³, նույնպես բնադատվում է ի. Դյակոնովի կողմից¹⁴⁴։ Սակայն, անհրաժեշտ է նշել, որ Ս. Երեմյանը Մելիտու քաղաքը իրավացիորեն տեղորոշում է Տարոնում, Մուշից հյուսիս-արևմուտք, Արածանի դեպի հյուսիսային ափերի մոտակայքում՝ հետագայի Սեղտի ավանի¹⁴⁵ տեղում, որը անունների նմանության պատճառով հաճախ շփոթվել է խեթական Մալատիա քաղաքի անվան հետ¹⁴⁶։

Ս. Երեմյանի կարծիքը հնարավոր է հաստատել ոչ միայն Թիզլաթպարոսար 1-ի՝ Գալանուից վերադարձի ճանապարհին Մելիտու (Մելիտիա) հասնելով, որը Գալանուից շատ հեռու չպետք է լիներ, այլ նաև URUMeliṣu (URUMeliṣa)՝ Սեղտի դուղահեռով։

Ըստ ուրարտա-հայկական հնչյունական օրինաչափությունների ուրարտերենի բառավարի Ա-ն հայերենում դառնում է -ել, սակայն ընկնելով շեշտի տակ տալիս է -եւ, ինչպես՝ URUAliṣṣu (URUA-ii-iṣ-ṣu-ú)¹⁴⁷ > Աղբտեւ¹⁴⁸ (դուղահեռի առանց լեզվական քննության՝ ըստ Մ. Խարախլյանի¹⁴⁹ և Ս. Երեմյանի)¹⁵⁰, որտեղ անցումը, անկասկած, կատարվել է հետևյալ ձևով։ URUAliṣṣu > Ալիստեւ > *Աղիստեւ > Աղստեւ։ Սակայն շեշտադրակ Ա-ն մնում է -ել > -լ, ինչպես՝ GÈNKurku (GÈNKür-ku₁₃-ú)¹⁵¹ (հավանաբար *Korku հնչմամբ) > Քարկ¹⁵² (դուղահեռը դարձյալ առանց լեզվական քննության՝ ըստ Գ. Վափանցյանի¹⁵³ և Ս. Երեմյանի)¹⁵⁴, որտեղ անցումն անկասկած կատարվել է հետևյալ ձևով։ GÈNKurku (*Korku հնչմամբ) > *Քարկ > Քար-Բ¹⁵⁵։ Հայտնի է, սակայն, որ բառավարի Է-ն կարող է տալ ի, ինչպես՝ Լօ-

¹⁴² IIAB, էջ 128.

¹⁴³ «Հայկական ՍՍՌ ատլաս», Երևան—Մոսկվա, 1961, էջ 102 (քարտեզ)։

¹⁴⁴ IIAB, էջ 84, ծան. 23.

¹⁴⁵ «Պատմություն Տարոնոյ, զոր թարգմանեաց Զենոր <Դիակ> Ասորի», Վենետիկ, 1832, էջ 26, 28, 36, 37, «Յոզիպոս Մամիկոնեանի եպիսկոպոսի Պատմութիւն Տարոնոյ», Վենետիկ, 1832, էջ 15, 23, 32, 38, 40, 42, 51, 53.

¹⁴⁶ ՀԲԱ, էջ 70.

¹⁴⁷ C. F. Lehmann-Haupt, Corpus Inscriptionum Chaldaicarum, I—II, Berlin und Leipzig, 1928—1935, տախտակ XXVII (հմմտ. ՄԿԻ, № 128, A2, տող 12, որտեղ [u₃=li])։

¹⁴⁸ «Պատմություն նահանգին Սիսական, արարեալ Ստեփաննոսի Օրդելեան արքեպիսկոպոսի Սրինաց», Ռիֆլիս, 1910 (կազմի վրա՝ 1911), էջ 397։

¹⁴⁹ Մ. Ա. Խարախլյան, էրեբունի բերդ-քաղաքի պատմություն, Երևան, 1971, էջ 189.

¹⁵⁰ «Հայկական ՍՍՌ ատլաս», էջ 102 (քարտեզ)։

¹⁵¹ F. E. Schmitz, Mémoire sur le lac de Van et ses environs („Journal Asiatique“, IX, Paris, 1840 (այսուհետև՝ M.V.), տախտակ VI (հմմտ. ՄԿԻ, № 127, V, տող 13, որտեղ GEN=KUR, Kür=gur, ku₁₃=qu)։

¹⁵² Զենոր Գլակ Ասորի, էջ 36, Հոզիպոս Մամիկոնյան, էջ 29, 40.

¹⁵³ Г. А. Капанцян, Историко-лингвистическое значение топонимии древней Армении, Ереван, 1940, էջ 44 = Историко-лингвистические работы, II, Ереван, 1975, էջ 104.

¹⁵⁴ «Հայ ժողովրդի պատմություն», I, Երևան, 1971, քարտեզ էջ 318-ից հետո։

նէ¹⁵⁵ > լօռի¹⁵⁶: Հետևաբար, URUMellitu > *Մելիտե > *Մելիտէ > *Մեղիտէ > *Մեղտէ > Մեղտի¹⁵⁷:

Եթե URUMellitu > Մեղտի անցումը միանգամայն օրինաչափ է, ապա այդ անվան տարբերակը ևս նույն ուրարտա-հայկական լեզվական օրինաչափությունների հիման վրա հայերենում հանդես էր գալու միևնույն ձևով, այն է՝ URUMellitia > *Մեղիտի > Մեղտի, քանի որ -ia վերջավորությունը տեղանունները հայերենում հանդես են գալիս միայն -ի վերջավորությամբ, որը ապացուցված է բավարար չափով¹⁵⁸:

Այսպիսով, Թիգլաթպալասար I-ը Դայաննուից հասել է ոչ թե Սև ծով և ապա շրջվել դեպի հարավ (խեթ. Մալատիա, ուրարտ. Մելետիա), այլ Դայաննու երկրով շարունակել է իր արշավանքը դեպի հարավ-արևմուտք և Արածանի գետի հյուսիսային ափերի մոտակայքում մտել է Մելիտու-Մելիտիա (այսինքն՝ հետագայի Մեղտի ավանը): Ուստի, Դայաննու երկիրը կարելի է տեղորոշել URUMellitu (URUMellitia) > Մեղտի ավանից հյուսիս-արևելք և Մանազկերտից հյուսիս-արևմուտք, Արածանիի միջին և վերին հոսանքների շրջանում, գետի հյուսիսային ափերի մոտակայքում:

Դայաննու երկրի աշխարհագրական գիրքի մասին նման պատկերացում ենք կազմում նաև Սալմանասար III-ի հաղորդած տվյալների հիման վրա: Այսպես, օրինակ, մ. թ. ա. 856 թ. արշավանքի ժամանակ Սալմանասար III-ը Ենզիտե երկիրը նվաճելուց և Արածանի գետը անցնելուց հետո, գրավում է նաև Սուխմու երկիրը և այնուհետև իջնում է Դայաննու, որից հետո հասնում է Արամու արքայի (860—840 թթ. մ. թ. ա.) Արծաշքու արքայական քաղաքը¹⁵⁹, փաստորեն հետևելով Ենզիտե (KUREnzite)—Սուխմու (KURSuḫmu)—Դայաննու (KURDaiaenu)—Արծաշքու (URUAršašku) արշավուղուն:

Հայտնի է, որ հիշյալ Սուխմու երկիրը գտնվել է Եփրատի վերին և Արածանիի ստորին հոսանքների միջև: Ըստ Ն. Ադոնցի Սուխմու երկիրը հետագայի Բալահոփտն է¹⁶⁰, ըստ Ի. Դյակոնովի այն տեղորոշվում է Մեծկերտ—Երզնկա շրջանում¹⁶¹, Գ. Մելիքիշվիլու կարծիքով այն Արածանիից հյուսիս տարածվել է մինչև Երզնկա¹⁶², Ն. Հարությունյանը համամիտ է այն տեսակետներին, ըստ որոնց Սուխմու երկիրը գտնվել է Արածանիից հյուսիս¹⁶³, Նկատի ունենալով այն հանգամանքը, որ ասորեստանյան աղբյուրների Սուխմու երկիրը խեթական արձանագրություններում հանդես է գալիս որպես Զուխմա¹⁶⁴ ([KUR] URUZu-u-uḫ-ma)¹⁶⁵, որը գտնվել է Արածանիի ստորին

¹⁵⁵ Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, Աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 70, 85, 93, 106, 151, 171, ինչպես նաև այլ պատմիչների մոտ:

¹⁵⁶ «Աշխարհացոյց Վարդանայ վարդապետի», Քննական հրատարակություն Հայկ Պերպերյանի, Բարիզ, 1960, էջ 17 և այլ հեղինակների մոտ:

¹⁵⁷ ЛУЦГА, էջ 85:

¹⁵⁸ Հ. Հ. Կարապետյան, Սեպագիր աղբյուրների Ալիա քաղաքը (ՀՍՍՀ ԳԱ «Երաբեր», 1975, № 4, էջ 94—96):

¹⁵⁹ АВНИУ, № 27 (II, տող 45 և հետո):

¹⁶⁰ HdA, էջ 80—81:

¹⁶¹ АВНИУ, № 27, ծան. 12. ПАИ, էջ 84, 138:

¹⁶² НУ, էջ 53, 89, 176, 243, 407. ИДГ, էջ 103, 172, 234:

¹⁶³ БУ, էջ 106, ծան. 28:

¹⁶⁴ НУ, էջ 53, 73, 81, 89, 418:

¹⁶⁵ KUB, XXIII, № 72, OC, տող 36 և այլուր:

Հոսանքների շրջանում տարածվող իշուա երկրից հյուսիս-արևելք, ապա Դուխմա (այսինքն՝ ասորեստանյան աղբյուրների Սուխմու) երկիրը Վ. Խալատրյանը տեղորոշում է Բյուրական լեռներում¹⁶⁶։

Այսպիսով, բնդհանուր եղրակացությունն այն է, որ Սուխմու երկիրը գտնվել է Արածանիից հյուսիս, սակայն նրա տեղագրության մասին եղած կարծիքները որոշ զեպքերում կարիք ունեն ճշգրտման։

Սալմանասար III-ը պարզորոշ ասում է, որ դուրս գալով Ենզիտե երկրից (KUR ENZITE)¹⁶⁷ Աննիտ¹⁶⁸, ըստ Ք. Պատկանյանի¹⁶⁹, անցնում է Արծանիա գետը (UDARŞANIA)¹⁷⁰ Արածանի¹⁷¹, ըստ Գ. Խալաթյանցի¹⁷² և մոտենում է Սուխմու երկրին¹⁷³։ Հետևաբար, Սալմանասար III-ը Արածանին անցել է հետագայի Խարրերդի դաշտից (որը հայ մատենագրության մեջ հայտնի է Ալեյուլայ դաշտ անվամբ)¹⁷⁴, Պաղինի գետաբերանից արևմուտք։ Եթե նկատի ունենանք, որ Հայկական լեռնաշխարհի երկրները, սովորաբար, գտնվում էին գետերի հովիտներում, ապա կարելի է եղրակացնել, որ Սուխմու երկիրը, հավանաբար, գտնվում էր Պաղին (այժմյան Փերի) գետի ինչպես սուրբին, այնպես էլ վերին ավազանում, զբաղեցնելով հետագայի Պաղնատուն և Խորձյանր փալատների տարածքը, փաստորեն, տարածվելով Արածանիից մինչև Սրմանց (Բյուրական) լեռները։

Մեր այս ենթադրությունը հնարավոր է հաստատել նրանով, որ Սալմանասար III-ը Արածանի գետը անցնելուց հետո, երբ մոտենում է Սուխմու երկրին, նշում է, որ ինքը դրավել է այդ երկրի ամրություններից մեկը (Սուխմու երկրի՝ առայժմ մեղ հայտնի միակ բնակավայրը)¹⁷⁵, Վաշթալ (URU Uaštal)¹⁷⁶ քաղաքը, որը, հավանաբար, եղել է եթև ոչ տվյալ երկրի վարչական կենտրոնը, ալդա դոնե նրա սահմանային ամրոցներից մեկը։

Վաշթալ քաղաքի տեղորոշմամբ զբաղվել է միայն Ս. Երեմյանը։ Նկատի ունենալով հիշյալ քաղաքի կարեորությունը և Արածանիի մոտակայքում գտնվելը, նա ենթադրում է, որ այն կարելի է տեղորոշել Թերևս հետագայի նույնդևս նշանավոր Արշամաշատ (հունական աղբյուրներում՝ Ἀρσάμας)¹⁷⁷ քաղաքի տեղում¹⁷⁸, որը նույնպես գտնվում էր Եփրատի (իմա՝ Արածանիի) և Տիգրիսի միջև՝ Գեղեցիկ դաշտում (Καλὸν πεδῖον)¹⁷⁹, Արածանիին ավելի

¹⁶⁶ В. II. Хачатрян, Восточные провинции Хеттской империи, Ереван, 1971, էջ 118, 160.

¹⁶⁷ АВВНУ, № 27 (II, տող 40 և հետո) և այլուր։

¹⁶⁸ Մովսես Խորենացի, էջ 274։

¹⁶⁹ Ք. Պ. Պատկանյան, Վանի արձանագրությունները և նրանց նշանակությունը Առաջավոր Ասիայի պատմության համար, Թբիլիս, 1883, էջ 48։

¹⁷⁰ АВВНУ, № 27 (II, տող 45 և հետո), № 28 (տող 141 և հետո)։

¹⁷¹ ՀՀԱ, էջ 107, 108, 110։

¹⁷² ИГНДА, էջ 120։

¹⁷³ АВВНУ, № 27 (II, տող 45 և հետո)։

¹⁷⁴ Մաթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, Վաղարշապատ, 1898, էջ 208։

¹⁷⁵ ИВ, էջ 111։

¹⁷⁶ АВВНУ, № 27 (II, տող 45 և հետո)։

¹⁷⁷ Ptol., V, 13, 19. VIII, 19, 14 և այլ հեղինակների մոտ։

¹⁷⁸ «Հայկական ՍՍՌ ատլաս», էջ 102 (բարտեղ)։

¹⁷⁹ P'olyb., VIII, 23, 1.

մոտիկ¹⁸⁰, հետևաբար, նրա հարավային ափերի մոտակայքում: Սակայն վաշթալ քաղաքի նմանօրինակ տեղորոշումը տրամաբանական լինելով հանդերձ, ինչպես կարելի է նկատել, հակասում է իրականությանը: Հետևելով սկզբնաղբյուրների տվյալներին, կարելի է ենթադրել, որ Վաշթալ քաղաքը գտնվում էր ոչ թե Արածանիի հարավային, այլ հյուսիսային ափերից ոչ հեռու (ձգրտումը ըստ Ս. Երեմյանի)¹⁸¹, Պաղին (այժմյան Փերի) գետի ստորին հոսանքների մոտակայքում:

Եթե նկատի ունենանք, որ սեպագիր աղբյուրների բնակավայրերի մեծ մասի անունները հարատևել են մինչև մեր օրերը, ապա կարող ենք եզրակացնել, որ հայկական աղբյուրների Վասկերտ ավանը¹⁸², որ հիշատակվում է նաև ուշ շրջանում¹⁸³ և այժմ էլ գտնվում է հիշյալ Պաղին (Փերի) գետի ստորին ավազանում, նրանից քիչ արևմուտք¹⁸⁴, միևնույն Վաշթալ քաղաքն է: Եթե նկատի ունենանք, որ URUaštal տեղանունը հնարավոր է բաժանել Uaš- և -tal մասերի¹⁸⁵, ապա URUaštal > Վասկերտ տեղանունների մեջ Uaš- > Վաս- անցումը կարելի է միանգամայն օրինաչափ համարել: Իսկ ինչ վերաբերում է քաղաքանվան երկրորդ բաղադրիչին՝ -tal հատվածին, ապա այն, հավանաբար, պահպանված է հայերենում՝ tal > բաղ անցումով, որը, ինչպես հայտնի է, նշանակում է «մի քաղաքի որոշակի մասը, արվարձանը»¹⁸⁶, բայց թերևս նաև «աւան», «շէն» նշանակությամբ [հմմտ. Դամթաո՝ բնակավայր Արածանիի ստորին հոսանքների շրջանում¹⁸⁷, թերևս նաև Դութաղ՝ բնակավայր Արածանիի վերին հոսանքների շրջանում, Մանազկերտից հյուսիս¹⁸⁸ (հմմտ. Բասենի արևմտյան մասում գտնվող Դու գյուղի անունը)¹⁸⁹, անգամ Թաղ՝ գյուղ Շատախում¹⁹⁰ և այլն], որի պատճառով էլ այն հետագայում հեշտությամբ փոխարինվել է -կերտ բաղադրիչով (URUaš-tal > Վաս-կերտ), այնպես, ինչպես ունենք ուրարտ. URUMenezaia (URU Me-né-za-i-a-né¹⁹¹, այսինքն՝ «Մենեզայայից») > Մանազկերտ¹⁹² (ստուգաբանված է մեր կողմից)¹⁹³:

Եթե ճիշտ է մեր ենթադրությունը, ապա Սալմանասար III-ը Վաշթալ քաղաքը (հետագայի Վասկերտ ավանը) գրավելուց հետո շարժվում է գեպի

180 «Հայ ժողովրդի պատմություն», I, Երևան, 1971, էջ 519:

181 Նույն տեղում, բարտեղ էջ 318-ից հետո:

182 «Ստեփանոսի Տարօնեցու Ասողկան Պատմութիւն տիեզերական», Ս. Պետերբուրգ, 1885, էջ 70, ծան. 5:

183 Պ. Նաթանյան, Արտասր Հայաստանի կամ Տեղեկադիր Բալուա, Քարբերդու, Չարսանձազի, Ժապաղ չուրի և Երզնկայու, Կոստանդնուպոլիս, էջ 105:

184 «Турция», М., 1973 (քարտեզ):

185 ИВ. էջ 89:

186 Հ. Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, II, Երևան, 1973, էջ 143: Բնագրում՝ «մի քաղաքի մասերը, արվարձանները»:

187 Պ. Նաթանյան, նշվ. աշխ., էջ 106:

188 Ա.-Դո, Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները, Երևան, 1912, էջ 217 և այլ հեղինակների մոտ:

189 «Ղազարայ ֆարպեցու Պատմութիւն Հայոց և Թուրք առ Վահան Մամիկոնեան», Թիֆլիս, 1907, էջ 299, 321:

190 Նույն տեղում, էջ 65:

191 УКИ. № 60, տող 6 (որտեղ ne=ni, λ=1):

192 Ջենոբ Գլադ Ասորի, էջ 40, ծան. 1:

193 ЛУЦГА, էջ 69—73:

Հյուսիս-արևելք, հասնում Սրմանց (Բյուրակն) լեռների հարավ-արևմտյան փեղերին, ապա շարունակելով անապարհը դեպի արևելք, նույն լեռների հարավ-արևելյան մասերից իջնում է Բնագրում հենց այդպես էլ նշված է, որ իջնում է, դեպի Դալանու¹⁹⁴։

Հեռավար, Դալանու երկիրը տեղորոշվում է Սրմանց (Բյուրակն) լեռների հարավ-արևելյան կողմում և, հավանաբար, ձգվում էր մինչև Արածանի դեպի, ինչպես ասվեց վերևում։

Այս անսակևոր կարևոր է հաստատել հիշյալ սկզբնաղբյուրի կրկնօրինակի տվյալներով, որտեղ առկա Սուխմու—Դալանու—Արծաշքու արշավուղին ներկայացված է հետևյալ կերպ. 18tu KURS-uḫ-ni a-di KURMe-li-i 18tu KURMe-li-i a-di KURDa-ja-e-ni 18tu KURDa-ja-e-ni a-di URUAr-a-á-ku-uḫ¹⁹⁵, այսինքն՝ «Սուխմուից մինչև Մելիտու, Մելիտուից մինչև Դալանու, Դալանուից մինչև Արծաշքու», որտեղ URUArsašku¹⁹⁶ > Արգեշ¹⁹⁷ անցումը անկասկած է¹⁹⁸։ Հետևաբար, ինչպես Սուխմու—Դալանու—Արծաշքու, այնպես էլ Սուխմու—Մելիտու—Դալանու—Արծաշքու արշավուղին փաստորեն ձգվել է Արածանիի հովտով՝ հարավ-արևմուտքից դեպի Հյուսիս-արևելք, քանի որ Սալմանասար III-ի արշավուղին ըստ նախկին տեղորոշումների հնարավոր չէ պատկերացնել Սուխմու (Արածանիի ստորին հոսանքներից Հյուսիս)—Դալանու (Ջորոխի ավազան)—Սելիաու (Մալաթիա)—Արծաշքու (Արգեշ) դժով։ Ուստի հաստատվում է ոչ միայն URUMellītu (URUMellīta) > Մելիտի դուդահնոր, այլ նաև այն, որ Դալանու երկիրը, իրոք, գտնվել է հետադարձ Մելիտի—Արգեշ քաղաքների միջև, Արածանիից Հյուսիս։

Այս ենթադրությունը հաստատվում է նաև նրանով, որ երբ Սալմանասար III-ը իր մի այլ արշավանքի ժամանակ մ. թ. ա. 845 թ. անցնելով Տուներուն (KURTunebune)¹⁹⁹ երկրի լեռնանցքով, հասնում է Եփրատի (IDPura) ակունքներին, նրան է ներկայանում Դալանու երկրի արքա Ասիան և իր խոնարհությունը հայանում²⁰⁰։

Բավոր, տվյալ հատվածում հիշված Եփրատ դեպի մասնագիտական դրականություն մեջ համարվում է Արևմտյան Եփրատը²⁰¹, այդ իսկ պատճառով էլ ենթադրվում է, որ Դալանու երկիրը գտնվում էր այդ գետի ակունքներից Հյուսիս, այն է՝ Ջորոխի ավազանում²⁰²։ Սակայն սկզբնաղբյուրը նման հետևություն համար ոչ մի հիմք չի տալիս։ Այնտեղ պարզապես ասված է, որ Տիգրիսի ակունքներին հասնելուց և զոհեր մատուցելուց հետո, Սալմանասար III-ը անցնում է Տուներուն երկրի լեռնանցքով և նվաճում Ուրարտուի արքա Արամուի բնակավայրերը մինչև Եփրատի ակունքները²⁰³։

¹⁹⁴ ABIIIY, № 27 (II, տող 45 և հետո)։

¹⁹⁵ ASKA, IV, տող 31—34 (որտեղ {t=dl, la=la)։

¹⁹⁶ ABIIIY, № 27 (II, տող 45 և հետո, տող 54 և հետո). X^o 28 (տող 35 և հետո). № 29, 31, 32 և այլուր։

¹⁹⁷ «Պատմություն Սելուսի Եպիսկոպոսի ի Հերակլն», Թիֆլիս, 1913 (կազմի վրա՝ 1912), էջ 36, 149, 238 և այլ պատմիչների մոտ։

¹⁹⁸ JYUΓA, էջ 86—97։

¹⁹⁹ ASKA, III, տող 38 և այլուր (որտեղ né=ni)։

²⁰⁰ ABIIIY, № 31։

²⁰¹ IY, էջ 59, 189, 250. BIL, էջ 57. PAH, էջ 154։

²⁰² ABIIIY, № 10, ծան. 45 և այլ հեղինակների մոտ։

²⁰³ ABIIIY, № 31։

Հակառակ իշխող կարծիքի, անհրաժեշտ է ասել, որ Սալմանասար III-ը Տիգրիսի ակունքներին հասնելուց հետո, եթե անցել է Տուներունե (կամ ցանկացած, երկրի լեռնանցքով, ապա, բնականաբար, նա մտել է Արածանիի հովիտը և ոչ թե Եփրատի, ուստի նա նվաճել է Ուրարտուի արքա Արամուի բնակավայրերը մինչև Արածանիի ակունքները և ոչ թե Եփրատի: Սակայն, նկատելի է, որ Սալմանասար III-ը, այնուամենայնիվ, հիշատակում է Եփրատ անունը և ոչ թե Արածանի: Դա կատարվում է հետևյալ պատճառով: Ասորեստանյան աղբյուրներում Արածանի գետը Արծանիա (I'DAršanla) էր կոչվում միայն իր ստորին հոսանքների շրջանում, իսկ միջին հոսանքներից սկսած այն կոչվում էր Պուրատու (I'DPuraṭu), ինչպես կտեսնենք ստորև: Այս իսկ պատճառով էլ անհրաժեշտ է եզրակացնել, որ Արամու արքան իշխում էր ոչ թե մինչև Եփրատի ակունքները, ինչպես ընդունված է²⁰⁴, այլ Արածանիի և այն էլ ոչ թե նրա ստորին, այլ միջին հոսանքների շրջանից սկսած: Այնուհետև, եթե հիշատակվում է Տուներունե երկրի լեռնանցքը, ապա անհրաժեշտ է եզրակացնել, որ Սալմանասար III-ը Տիգրիսի ակունքների մոտից իր նախորդ՝ մ. թ. ա. 856 թ., արշավուղին չի ընտրել, և այստեղ էլ Տիգրիսի ակունքները նախորդ արշավանքում հիշատակված ակունքները են: Սալմանասար III-ը այս արշավանքի ընթացքում, հավանաբար, հասել է Արամույան Տիգրիսի ոչ թե արևմտյան, այլ արևելյան ակունքներին և հենց այստեղից էլ մտել Տուներունե երկրի լեռնանցքը:

Հայկական աղբյուրներում հիշատակված Դոնեանք գյուղի անունը²⁰⁵ եթե հնարավոր լինի բխեցնել ասորեստանյան աղբյուրների Տուներունե երկրի անունից, որ այնքան էլ անհավանական չէ՝ KURTunebune (հավանաբար, *Tonebone հնչմամբ) > Դոնեանք, ապա մեր կարծիքը կարող է ավելի հավանական համարվել²⁰⁶, Ուստի Սալմանասար III-ը Եփրատ (այսինքն՝ Արածանի) գետին է հասել նրա միջին հոսանքների շրջանում՝ Մուշի մոտակայքում և հենց այս պատճառով էլ նա հիշյալ գետը կոչում է I'DPuraṭu (Եփրատ) և ոչ թե I'DAršanla (Արածանի):

Ինչպես վերևում տեսանք, ուրարտական Դայանեու երկիրը հիշատակվում է Թիգլաթպալասար I-ի և Սալմանասար III-ի արձանագրություններում, սակայն, գրության մի քանի տարբերակներով: Վկայված ձևերը հետևյալներն են.

ա. KURDaḷaeni²⁰⁷ (որի ուղղականը կլինի KURDaḷaenu):

բ. KURDaḷani²⁰⁸ (որը վկայված է նաև ուղղականով՝ KURDaḷanu)²⁰⁹,

գ. KURDaḷeni²¹⁰ (որի ուղղականը կլինի KURDaḷenu):

²⁰⁴ ИУ, էջ 189, 190, 192, 199, 250. ПАН, էջ 151.

²⁰⁵ Ղ ու կ ա ս Ի ն ճ Ի ճ Ե ա ն, Ստորագրություն հին Հայաստանայց, Վենետիկ, 1822, էջ 120: Սկզբնաղբյուրը ունի Դոնեվանք ձևը, որը, հավանաբար, վրիպակ է, բանի որ «վանք» բառը տվյալ դեպքում բացառվում է (Հ. Ո ս կ յ ա ն, Տարոն-Տուրուրերանի վանքերը, Վիեննա, 1953, էջ 86—87):

²⁰⁶ ЛУЦГА, էջ 83.

²⁰⁷ АВНУ, № 10 (IV, տող 43 և հետո. V, տող 22 և հետո). № 11—13. № 27 (II, տող 45 և հետո). № 29, № 31, ASKA, I, տող 63, 64. III, տող 43. IV, տող 33.

²⁰⁸ АВНУ, № 17, № 32, № 33.

²⁰⁹ АВНУ, № 31.

²¹⁰ АВНУ, № 28, տող 35 և հետո.

Այսպիսով, մենք ունենք միևնույն երկրանվան երեք ձև՝ KURDaJaenu, KURDaJaenu և KURDaJaenu, որոնցից ճշտագույնը միայն առաջին ձևն է՝ KURDaJaenu. Երկրորդից սխալմամբ բաց է մնացել ~~ա~~ սեպագրումը (KURDaJa<a>enu), իսկ երրորդից՝ ~~ա~~ սեպագրումը (KURDaJa<a>enu), թերևս հասկանալի է, որի մասին խոսք կլինի ստորև:

Մեր կարծիքով KURDaJaenu տեղանվան մեջ -e-ne վերջավորությունը հանդես է գալիս որպես ածանց և, փաստորեն, ուրարտական -ine վերջածանցի՝ ասորերենով վկայված ձևն է, այնպես, ինչպես ասորեստանյան արձանագրություններում այն հանդես է գալիս Ուրարտուի արքա Իշպուլինեի (Iš-pu-u-l-ne-e) ²¹¹ անվան մեջ՝ Iš-pu-e-ni ²¹² (որի ուղղականը կլինի Išpue-nu):

Հետևաբար, ասորեստանյան արձանագրությունների KURDaJaenu երկիրը, եթե հիշատակվել որարտական արձանագրություններում, ապա կարող էր հանդես գալ *KURDaJa:ne ձևով: Սակայն, անհրաժեշտ է նկատել, որ ուրարտերենի երկու ձայնավոր հնչյունների միջև սովորություն ունի մտցնելու հադադ՝], ինչպես որ այն հանդիպում է նաև հայերենում (օրինակ, կամա-ական > կամա-յ-ական), ուստի, հիշյալ *KURDaJa:ne տեղանունը եթե ոչ գրաֆիկ ձևով, ապա գոնե հնչման տեսակետից, հավանաբար, կլինի *KURDaJa<l>ine, որտեղ միմյանց ետևից հանդես եկող ալ կապակցություններից մեկը (KURDaJa<l>ine) հասկանալի օրենքով կկրճատվեր (հմմտ. սելյուքյան-ու-հայացի > *աշխալ-հայացի > աշխարհայացի) և կմնար միայն մի ալ (*KURDaJine), որը ուրարտ. երենում գրաֆիկ կերպով կարող էր հանդես գալ հետևյալ երկու ձևերով:

ա. *KURDa-l-ne (հմմտ. Սարգոն II-ի հիշատակած KURUšdīš երկրանունը՝ KURU-lš-dī-lš ²¹³, որտեղ երկու ձայնավորների միջև] հնչյունը գրաֆիկ կերպով չի արտահայտված, իսկ վերջին հն տեղաբնիկ ժողովրդի լեզվին հատուկ վերջավորություն է):

բ. *KURDa-l-ne [հմմտ. միևնույն KURUšdīš երկրանվան՝ Արգիշթե I-ի (786—764 թթ. մ. թ. ա.) մոտ հանդիպող KURU-lš-tine ձևը՝ KURU-lš-II-ne ²¹⁴, որտեղ երկու ձայնավորների միջև] հնչյունը արդեն գրաֆիկ կերպով արտահայտված է ²¹⁵, իսկ վերջին -ine ածանցը ուրարտերենի եղակի թվի բացառական-գործիական-առաջին հոլովի ցուցիչն է]:

Ռերկված օրինակներից բավական է նաև առաջին ձևը *KURDa:ne, որը, հավանաբար, հնչել է *KURDaJine (հմմտ. ասորեստանյան արձանագրությունների՝ հասկանալի կրճատված KURDaJeni ձևը ²¹⁶, որի մասին խոսք եղավ վերևում): Եթե հիշյալ *KURDa:ne ձևի վրա ավելացնենք ուրարտական տեղանուններում հանդիպող -ala վերջավորությունը, ինչպես՝ URUŠu-

²¹¹ YKII, № 15, տող 1 (որտեղ ne-ni) և այլուր:

²¹² F. Thureau-Dangin, Une Relation de la huitième Campagne de Sargon, Paris, 1912 (այսուհետև՝ HCS), տող 400, 401 (հմմտ. ABHUY, № 47, տող 367 և հետո):

²¹³ HCS, տող 91, 163, 167 (հմմտ. ABHUY, № 49, տող 91 և հետո, տող 156 և հետո, տող 167 և հետո):

²¹⁴ MLV, տախտակ V (հմմտ. YKII, № 127, IV, տող 55). CICH, տախտակ XXVIII (հմմտ. YKII, № 128, B2, տող 26), որտեղ երկու ղեկքում էլ]l=gl, né-ni:

²¹⁵ II. M. Дьяконов, Урартские письма и документы, М.—Л., 1963 (այսուհետև՝ УИД), էջ 56, ծան. 48:

²¹⁶ ABHUY, № 28, տող 35 և հետո:

daia²¹⁷, URUDiduala²¹⁸ և այլն, որը պահպանված է հայերենում —աղի ձևով՝ Դարանաղի²¹⁹, Մանանաղի²²⁰, Մարդաղի²²¹ տեղանուններում²²², ապա կատանանք *KURDainala երկրանունը։ Բարեբախտաբար, նման մի անուն պահպանված է Արգիշթի I-ի հորինության տարեգրության մեջ, տրված բացառական-գործիական-առաջին հոլովով և KUR «երկիր» բացահայտիչի փոխարեն I'D «գետ» բացահայտիչով՝ I'DDainalatnine (I'DDa-l-ne-la-ti-ni-né)²²³։

Գ. Մելիքիշվիլին այս անունը գիտել է որպես գետերի ինչ-որ տեսակի անուն²²⁴, բայց երբեք գետանուն, չնայած այն բանին, որ Գ. Ղափանցյանը դեռևս իր ժամանակին I'DDainalatnine ձևը թարգմանում էր «Դաինալա անունով գետից»²²⁵, մի տեսակետ, որը հետո կրկնում է Ֆ. Քյոնիգը²²⁶։ Ն. Հարությունյանը քննության առնելով սկզբնաղբյուրների տվյալները, իրավացիորեն հաստատեց, որ վերոհիշյալ անունը ոչ թե գետերի ինչ-որ տեսակի անուն է, այլ գետանուն, և այդ անունն էլ կրել է Արածանին իր վերին հոսանքների շրջանում²²⁷։

Հարցը Ն. Հարությունյանի կողմից լուծված էր բավարար չափով, սակայն, այնուամենայնիվ, կար մի խանգարիչ հանգամանք, Դա այն էր, որ Արածանի գետը դեռևս ասորեստանյան արձանագրություններում կրում էր Արծանիա (I'DAršania) անունը²²⁸ (տվյալ անվան մեջ նախկին za վանկի փոխարեն ša ընթերցումը առաջարկված է Հ. Հյուբշմանի կողմից)²²⁹, իսկ որոշ դեպքերում էլ՝ Պուրատու (I'DPuraṭu), ինչպես կարծում են Ն. Ազոնցը²³⁰, Ն. Հարությունյանը²³¹ և Գ. Մելիքիշվիլին²³², թեև վերջինս ավելի ուշ շրջանում այս տեսակետից հրաժարվում է, ենթադրելով, որ Արածանի գետը հնում երբեք Նփրատ չի կոչվել²³³, որը ընդունվում է Ի. Դյակոնովի կողմից²³⁴ և իր հաստատումը գտնում Մ. Գավուբյանի մոտ²³⁵,

217 УКН, № 155, F, տող 11.

218 АВВИУ, № 20:

219 ՀՀԱ, էջ 106 և այլ հեղինակների մոտ:

220 Նույն տեղում, էջ 106 և այլ հեղինակների մոտ:

221 Նույն տեղում, էջ 107 և այլ հեղինակների մոտ:

222 ЛУЦГА, էջ 87.

223 MLV, տախտակ VI (հմմտ. УКН, № 127, V, տող 17, որտեղ né=ni):

224 УКН, էջ 392 և այլուր:

225 ՈւՊ, էջ 163:

226 F. W. K ö n i g, Handbuch der Chaldischen Inschriften, Graz, 1955—1957 (այսուհետև՝ HChI), № 33, Vs, III, № 80, § 11, II.

227 Н. В. А р у т ю н я н, Данилала-тиии (ՀՄՄՀ ԳԱ «Տեղեկագիր», հաս. դիտ., 1957, № 4, էջ 100): Նույնի՝ Земледелие и скотоводство Урарту, Ереван, 1961, էջ 39. БУ, էջ 383, 387, 390.

228 АВВИУ, № 27 (II, տող 45 և հետո). № 28 (տող 144 և հետո):

229 Н. Н ü b s c h m a n n, Խշվ. աշխ., էջ 304.

230 ՀՊ, էջ 58.

231 БУ, էջ 45, ծան. 140.

232 НУ, էջ 170:

233 Г. А. М е л и к и ш в и л и, Ассирия и «страны Наира» на рубеже XII—XI вв. до н. э. («Вестник древней истории», 1963, № 2, էջ 117).

234 ПАН, էջ 125, ծան. 125.

235 Մ. Գավուբյան, Խշվ. աշխ., էջ 98.

Սակայն, ինչպես ցույց են տալիս հայ մատենագրության տվյալները, այս կարծիքը հիշտ լինել չի կարող. քանի որ Արածանի գետը՝ իր միջին հոսանքների շրջանում, հիշտ այնպես, ինչպես ասորեստանյան աղբյուրներում, կոչվել է Եփրատ. «Ունի դառնու վեշտասան... զՏարան, յորում գայ զհտն Մեղ և անկանի յԵփրատ»²³⁷. «Ի սնարս լերինն Քարքեայ, ի վերայ գետոյն Եփրատայ»²³⁸. «Ողական... որ կայ ի վերայ գետոյն Եփրատայ»²³⁹. Շառ Եփրատ զհտովն» (Չարհհափանի մոտակայքում)²⁴⁰. որ Գրիգոր Լուսավորիչը Տրդատ 111-ին (287—332 թթ.) և ժողովրդին Աշտիշատի մոտակայքում մկրտեց «Եփրատ զհտ»²⁴¹, հակառակ մյուս համանուն գետի, որը նույնպես կոչվել է Եփրատ՝ ինչպես Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմուտքում՝ Ասորեստանի սահմաններում²⁴², այնպես էլ Երզնկայի և Կարինի մոտակայքում²⁴³, սակայն անվանվել է նաև «մեծ»։ Տեղան... մինչև յայս կոյս գետոյն մեծի Եփրատայ», «ամրացան ի զհտն մեծ՝ որ կոչի Եփրատս, «մինչև ցեղը զհտոյն մեծի Եփրատայ»²⁴⁴ և այլն։

Մեր այս ենթադրությունը հաստատվում է նաև նրանով, որ հունա-հռոմեական աղբյուրների տվյալներով, որտեղ Եփրատ գետը, իրոք, կոչվում է Եփրատ (Εὐφράτης²⁴⁵, Euphrates²⁴⁶), իսկ Արածանին՝ ինչպես Արածանի ('Αρσανίας²⁴⁷, Arsanias²⁴⁸), ամենայն հավանականությամբ, ստորին հոսանքներում, այնպես էլ՝ Եփրատ ('Εὐφράτης)²⁴⁹, միջին հոսանքներում, մ. թ. ա. 401—400 թթ. տեղի ունեցած զեպրեկրի, այն է՝ հունական տասը հազարանոց փարձկան լանակի՝ Հայաստանի վրայով կատարած նահանջի կապակցությամբ։

Այսպիսով, վերոհիշյալ սևագիր արձանագրություններում հիշատակված Պուրատու (այսինքն՝ Եփրատ) զհտը տվյալ զեպրեկում միայն Արածանին է և, փաստորեն, կրել է առայժմ մեղ հայտնի երեք անուն. Արածանիա—Արածանի (ստորին հոսանքներում), Պուրատու—Եփրատ (միջին հոսանքներում) և Իսինայա (վերին հոսանքներում)։

Տեղին նկատենք, որ միևնույն զհտը հնում (և ոչ միայն հնում) իր հո-

²³⁶ ՀՀԱ, էջ 107, 108, 110.

²³⁷ Նույն տեղում, էջ 107.

²³⁸ «Արածանի գետի Պատմություն Հայոց», Աշխատություններ Գ. Տեր-Մկրտչյանի և Ս. Կոնյանյանի, Տփղիս, 1909, էջ 422.

²³⁹ «Փաստաստի Բուդանգյանի Պատմություն Հայոց ի շորս դպրությունս», Վենետիկ, 1933, էջ 196.

²⁴⁰ Նույն տեղում, էջ 257.

²⁴¹ Սահմաններ Օրբելյան, էջ 18.

²⁴² Մովսես Խորենացի, էջ 131, 132, 136, 144, 218, 219, 271.

²⁴³ Նույն տեղում, էջ 308, 338.

²⁴⁴ Սահման, էջ 36, 42, 172. Բնագրում, վերջին երկու դեպքում՝ Եփրատես և Եփրատայ.

²⁴⁵ Herod., I, 179, 180, 185, 186, 193. V, 52; Xen., Anab., I, 3, 20. I, 4, 11. I, 4, 14. I, 5, 1. I, 5, 10. I, 7, 15. I, 8, 4. II, 4, 5. IV, 1, 3; Pto l., V, 6, 1 և այլուր; Strabo, XI, 12, 2—4. XI, 13, 4. XI, 14, 1—3. XI, 14, 6. XI, 14, 8.

²⁴⁶ Tacit., Annales, II, 58. IV, 5. VI, 31. VI, 37. XIII, 7. XIV, 25, XV, 3. XV, 7. XV, 9. XV, 12. XV, 16. XV, 26.

²⁴⁷ Plut., Lucull., XXXI.

²⁴⁸ Tacit., Annales, XV, 15.

²⁴⁹ Xen., Anab., IV, 5, 2 («Քսենոփոն, Անարասիս, Թարգմ. Ս. Մ. Կրկյաշարյանի, Երևան, 1970, էջ 95).

սանքի տարբեր մասերում կարող էր ունենալ տարբեր անվանում և կոչվել այն բնակավայրի (ավան, քաղաք, երկիր և այլն) անունով, որի կողքով կամ միջով անցնում է: Օրինակ, Գումիստա գետ (Սուխումի մոտ), որը, սակայն, հերթականությամբ կոչվել է. Կումայու գետ (Կումա գյուղի մոտ), Մեծ Չամուղի գետ (Մեծ Չամուղ տեղանքի մոտ), Պզտիկ Չամուղի գետ (Պզտիկ Չասուղ տեղանքի մոտ), Լոբուշկայու գետ (Լոբուշկա յայլայի մոտ), Լեկամայու գետ (Լեկամա յայլայի մոտ, որտեղից և սկիզբ է առնում այն), Ուստի Արածանի գետը իր վերին հոսանքներում կոչվել է ԻՊԴալնալ ճենց այն պատճառով, որ անցել է միևնույն անունը կրող երկրի կողքով կամ միջով, Այգ իսկ պատճառով էլ ասորեստանյան աղբյուրների KURDa(a)enu երկիրը կարելի է տեղորոշել ուրարտական աղբյուրների ԻՊԴալնալ (իմա՝ *KURDa(n)ala) երկրում՝ Արածանիի միջին և մասամբ վերին հոսանքների շրջանում, Մանազկերտից հյուսիս-արևմուտք, հիշյալ գետի հյուսիսային ափերի մոտակայքում:

Ինչպես նշվեց վերևում, Թիգլաթպալասար I-ը մ. թ. ա. 1112 թ., իր չորրորդ արշավանքի ժամանակ, մինչև Դայաենու հասնելը անցել է 16 լեռն²⁵⁰, որոնցից, ն. Ադոնցի կարծիքով, և ոչ մեկի տեղը հայտնի չէ²⁵¹, թեև դրանք, հավանաբար, գտնվել են Արածանիից հարավ²⁵², ինչպես եզրակացնում է նաև Գ. Մելիքիշվիլին²⁵³, Ի. Դյակոնովի կարծիքով, 16 լեռներից երկրորդը՝ Ամադանա (GÈNA-ma-da-na)²⁵⁴, հավանաբար, գտնվել է Եփրատի և Արևմտյան Տիգրիսի միջև²⁵⁵:

Սակայն, Դայաենու երկրի՝ որպես արշավանքի վերջնակետի, տեղադրության հարցը նոր փաստերով հիմնավորելու համար անհրաժեշտ է հիշյալ 16 լեռներից հատկապես վերջին երկուսի՝ 15-րդի և 16-րդի տեղորոշումը: Ինչպես հայտնի է, դրանք են Նուբանաշե (GÈNNu-ba-na-a-še)²⁵⁶ և Շեշե (GÈNŠe-e-še)²⁵⁷ լեռները:

Հիշատակված լեռներից առաջինը՝ GÈNNubanase, մեր կարծիքով, բարդ կազմութուն ունի և բաղկացած է երկու մասից.

ա. nube, որը, ըստ երևույթին, կապ ունի խուտերենի nube «տասը հազար», «բյուր»²⁵⁸ բառի հետ: [Վերջինս, հավանաբար, ծագում է *nuibe «բյուր» ձևից, 1 ձայնավորի անկումով, ինչպես ունենք ուրարտերենում՝ alsulše, բայց նաև՝ alsuše, «մեծութուն»²⁵⁹, ուստի՝ *nuibe > nube «տասը հազար», «բյուր», որտեղ nu «տասը», իսկ ibe «հազար» է նշանակում, ինչպես ունենք ուրարտերենում՝ alibe «տասը հազար», «բյուր»²⁶⁰, որի բաղադրիչ մասերը կլինեն ate «տասը» և ibe «հազար», ընայած խուտերենում կա նաև eman

250 АВИИУ, № 10 (IV, տող 43 և հետո):

251 20, էջ 58, ծան. 1:

252 Նույն տեղում, էջ 58:

253 НУ, էջ 170:

254 НУ, էջ 169, ծան. 2=АВИИУ, № 10 (IV, տող 43 և հետո):

255 АВИИУ, № 23, ծան. 64. НУ, էջ 170:

256 АВИИУ, № 10 (IV, տող 43 և հետո)=НУ, էջ 169, ծան. 2 (որտեղ GÈN=šad):

257 Նույն տեղում:

258 L. F r i e d r i c h, Hethitisches Wörterbuch, Heidelberg, 1952—1954 (այսուհետև՝ HWb), էջ 323. ЯДПА, էջ 141:

259 УКН, էջ 386:

260 Նույն տեղում, էջ 391:

«տասար» բառը²⁶¹, իսկ ուրարտերենում՝ ʾa-ʾnu²⁶² «քսան» թվականը (մեր ենթադրությունը), որը վերծանվում է [ʔ]-ar-nu-né²⁶³ կամ [t]a-ar-nu-né²⁶⁴ ձևերով, կադմոված՝ ու: «տասար» և ʾa-ʾra «երկու» բառերով: Վերջինս վկայված է ʾarane²⁶⁵ «երկրորդ անգամ (?)»²⁶⁶, «երկրորդ (?)»²⁶⁷ ձևով, որի նման թարգմանությունից հետագայում, առանց որևէ հիմքի, հրաժարվում է Ի. Դյակոնովը, ենթադրելով, որ ևիշտ կլինի ʾsiše «երկու»²⁶⁸, շնայած որ նախկինում նա բնորոշում էր ʾsiše «երկու» թարգմանությունը²⁶⁹։ Հենվելով ոչ միայն ʾsištine «երրորդ անգամ (?)»²⁷⁰ ձևի վրա (հմմտ. նաև ʾsišuhane «երրորդ (?)» կամ «երրորդ» բառը)²⁷¹, այլև նկատի ունենալով կիսադադափարագիր-կիսափանկագիր III-ՏԵ ձևը²⁷², որը, իրավամբ, կարելի էր վերծանել որպես ʾsiše «երկու», բայց ոչ երբևէ ʾa-ʾra «երկու»]։

Բ. ՅՈՒՅԵ, որը, ամենայն հավանականությամբ, հասարակ դուրական է, սակայն հանդես է գալիս նաև որպես հատուկ անուն: Այսպես, օրինակ, Իշպուրինի (825—810 թթ. մ. թ. ա.) և Մինուայի (810—786 թթ. մ. թ. ա.) արձանագրություններում հանդիպում է Անաշե (UʾUAnaše) քաղաքը²⁷³։ Հետևյալից, ուրարտերենում բարդ կադմությամբ հանդիպող ʾanaše բառը, քանի որ հանդես է գալիս որպես հատուկ անուն՝ UʾUAnaše, ապա կարելի է հղարկացնել, որ այն դոյական է և արտահայտում է մի այնպիսի զաղափար, որը հնարավոր լինի կապել ինչպես «բար» բառի (լեռնանվան ղեպում), այնպես էլ հատուկ անվան հետ (քաղաքանվան ղեպում)։

Նկատի ունենալով Խիդաթուպասար I-ի՝ մ. թ. ա. 1112 թ. արշավուղին, այն է՝ Խիդաթի վրայով (իմա՝ Արածանի միջին հոսանքների շրջանում) կատարած զետանցի ձախ (հարավային) ափից դեպի աջ (հյուսիսային) ափը և նրա երկր Արածանի հովտով հարավ-արևմուտքից դեպի հյուսիս-արևելք,

²⁶¹ HWB, էջ 320:

²⁶² II. Я. Марр, И. А. Орбели, Археологическая экспедиция 1916 г. в Ван, Петроград, 1922 (այսուհետև՝ АЭВ), տախտակ XIII = ClCh, տախտակ XXXVI:

²⁶³ YKII, № 155, F, տող 13 (որտեղ né=ni):

²⁶⁴ ClChI, № 103, § 15, I (որտեղ né=ni):

²⁶⁵ YKII, № 155, A, տող 13 (որտեղ né=ni):

²⁶⁶ YKII, էջ 408: Մեր կարծիքով ʾarane նշանակում է «երկիցս», «երկին»:

²⁶⁷ YIIJ, էջ 91:

²⁶⁸ YIIJ, էջ 111, ծան. 50:

²⁶⁹ YIIJ, էջ 91:

²⁷⁰ YKII, էջ 407 (որտեղ né=ni): Մեր կարծիքով, ʾsištine նշանակում է «երիցս», ուստի և ʾsiše կարող է լինել միայն «երեք» այն պարզ պատճառով, որ Սարգուրն II-ը (764—735 թթ. մ. թ. ա.) Գտնադղան տարեգրության մեջ միևնույն տարում կատարած իր երեք արշավանքները նշում է հետևյալ կարգով: Առաջին արշավանք.— «Արշավեցի Բարիլույն երկրի վրա» (YKII, № 155, A, տող 4—5): Երկրորդ արշավանք.— «Հենց-այդ-նույն տարում ʾarane արշավեցի Եփրատի (երկրի)-վրա» (YKII, № 155, A, տող 13), ուստի՝ ʾarane նշանակելու է «երկիցս», «երկին»: Երրորդ արշավանք.— «Հենց-այդ-նույն տարում ʾsištine արշավեցի Ուրմե (երկրի) վրա» (YKII, № 155, A, տող 22), հետևաբար, ʾsištine նշանակելու է «երիցս» և ո՛րև որևէ այլ բան:

²⁷¹ YKII, էջ 407: YIIJ, էջ 91: Մեր կարծիքով, ʾsišuhane նշանակում է «երրորդ-անգամ» (ʾsiše «երեք» հիմքով): Ուստի և ʾsišuhane (YKII, էջ 410) «երրորդ-անգամ» («հետևաբար՝ ʾsiše «երեք»», իսկ ʾsišuhane (YKII, էջ 408) «հինգերորդ-անգամ» («հետևաբար՝ sure «հինգ»):

²⁷² YIIJ, № 7, ClC, տող 15:

²⁷³ YKII, էջ 417:

ապա կարելի է ենթադրել, որ Նուբանաշե (GENNubanaše) լեռը, թերևս, գտնվել է Արածանիի միջին հոսանքներից հյուսիս ընկած շրջանում և համապատասխանում է Սրմանց (Բիրական) լեռներին: Եթե հավանական են հիշյալ լեռան անվան առաջին մասի վերաբերյալ ունեցած մեր դիտողությունները, այն է՝ nube «տասը հազար», «բյուր», ապա, մեր կարծիքով, նույն անվան երկրորդ մասը՝ օնաše թերևս, կարող է նշանակել «աղբյուր», «ակն»:

Եվ իրոք, Հայկական լեռնաշխարհում ունենք Ակն քաղաք, որի շինարարության սկիզբը համարվում է 1021 թ. հետո, Սենեքերիմ Արծրունու (1003—1021 թթ.) ժամանակներում («Շինեցին և ոմանք յիշխանաց նորա քանի մի քաղաքս. ընդ որս և զքաղաքն Ակնայ առ Եփրատաւ»)՝²⁷⁴ և Բյուրական (Բիրական) լեռ, որը հայկական աղբյուրներում հիմնականում հանդես է գալիս Սրմանց լեռն անվան տակ²⁷⁵ և որի աղբյուրաշատ լինելու մասին կա հատուկ վկայություն. «Արշամունիք՝ առ Սրմանց լեռամբ, որ կոչի Կատար երկրի, յորմէ յոյժ բղխեն աղբիւրք»²⁷⁶:

Իհարկե, Ակնը Անաշե քաղաքի տեղում չէ, բայց Բյուրականը, այսպիսով, ճշտությամբ համընկնում է Նուբանաշեի հետ և, բնականաբար, վերջինիս անվան թարգմանված ձևն է, մի ձև, որը թեև հայերենի համար վաղուց կորած, սակայն, թարգմանաբար պահպանվում էր շրջակա օտարամուտ բնակչության լեզվում, որից և անցյալ դարի կեսերին վերստին թարգմանվեց հայերեն որպես Բյուրական (Բիրական)²⁷⁷:

Այսպես, ուրեմն, Թիզլաթպալասար I-ը Նուբանաշե (այսինքն՝ Սրմանց, Բյուրական) լեռան հարավ-արևելյան կողմում գտնվող Դայաննու (իմա՝ Դանալա) երկրում կամ նրա մոտակայքում հաղթական ճակատամարտ է տալիս Նաիրիի 23 երկրների զորքերի դեմ, որի կապակցությամբ հետագայի Մանազկերտից մոտավորապես 30 կմ արևմուտք հուշարձան է կանգնեցնում²⁷⁸: Այնուհետև Թիզլաթպալասար I-ը բռնում է վերադարձի ճանապարհը, այն է՝ Արածանիի հովտով հյուսիս-արևելքից դեպի հարավ-արևմուտք և, մեր կարծիքով, հենց այստեղ էլ Մելիտու (Մելիտիա), այն է՝ հետագայի Մելոտի չնասած, հաղթահարում է Շեշե (GENŠeše) լեռը, որը մասնագիտական գրականության մեջ սխալմամբ նույնացվում կամ գոնե համեմատվում է ուրարտական աղբյուրներում հիշատակվող Շեշեթինա (GENŠe-še-e-ti-i-na-a)²⁷⁹ լեռան հետ²⁸⁰, լեռ, որը գտնվում էր կա՛մ հետագայի Շավշատում, ինչպես կարծում է Գ. Մելիքիշվիլին²⁸¹ (ընդ որում, տվյալ լեռը նրա կողմից գիտվում է որպես երկիր), կա՛մ Պոնտական լեռների հարավային լեռնաճյուղերից մեկում, ինչպես կարծում է Ն. Հարությունյանը (միաժամանակ նշելով, որ այն ոչ թե ևրկիր է, այլ լեռ)²⁸², և կա՛մ Արաքսի վերին հոսանքների շրջա-

²⁷⁴ Միքայել Զամչևանց, Պատմութիւն Հայոց, II, Վենետիկ, 1785, էջ 903:

²⁷⁵ ՀՀԱ, էջ 107:

²⁷⁶ Նույն տեղում:

²⁷⁷ Շնորհալույթյամբ պետք է նշենք, որ այս վերջին թարգմանության մասին մեղ տեղյակ պահեց ակադ. Ս. Ս. Երևմյանը:

²⁷⁸ АВИАУ, № 17.

²⁷⁹ MLV, տախտակ XLII (հմա. УКН, № 36, տող 10) (որտեղ GEN=KUR):

²⁸⁰ БУ, էջ 42, 159, 415, 416.

²⁸¹ НУ, էջ 60, 115, 252, 407. ИДГ, էջ 205.

²⁸² БУ, էջ 42 (ծան. 130), 159, 415—416 (ծան. 356):

նում, թերևս Ջիվին գյուղի մոտակայքում, Կարսից մոտ 50 կմ հարավ-արև-
մուտք, եթե նկատի ունենանք ուրարտական համապատասխան կոթողների
դտնվելու վայրը և հատկապես Մինուայի արձանագրությունները²⁸³:

Մեր կարծիքով, Շեշե (GENŠe-e-še) լեռան անունը միջին և հնչյունի
բացարձակ հստակության պայմաններում, խիստ ուրարտական է, որը սա-
կայն խոտերենում և խեթերենում կարող էր հանդես գալ որպես *Šaša, եթե
նկատի ունենանք հետևյալ դուգահեռները. ուրարտ. seša²⁸⁴ — խուռ. šaia²⁸⁵
«աղջիկ», «ղուսար», ուրարտ. URUMeleša (URUMe-le-ši-a-né)²⁸⁶, խեթ.
URUMaš(a)ša (URUMa-aš-i-la)²⁸⁷ և այլն:

Եվ այսպես, Տարոնի Հյուսիս-արևելյան մասում գտնվող լեռնաշղթան,
որի լեռնապարր ճեղքելուց հետո Արածանին դուրս է գալիս Մուշի դաշտ²⁸⁸,
մենք դիտում ենք որպես Շեշե (GENŠeše) լեռ և այն կապում մեր ենթադրած
խոտերական կամ խեթական համապատասխան *Šaša վերականգնված ան-
վան հետ:

Բարերախտարար, խեթերենով ավանդված šaša- րառը, որը, ամենայն
հավանականությամբ, ինչ-որ կաթնասուն կենդանու անուն է²⁸⁹ և հանդես է
գալիս նաև զաղափարադիր ձևով՝ URUKUR·RA «այծքաղ», «այծեղջերու»
ձևով²⁹⁰, կարող է լույս սփռել սույն GENŠeše > *Šaša լեռնանվան վրա, որը,
հավանաբար, ունենալու է միևնույն իմաստը:

Եթե նկատի ունենանք, որ սեպագիր շրջանից մեզ հասած լեռնանուն-
ները նշանակություն կամ իմաստ ունենալու դեպքում թարգմանվել են հա-
յերեն (հմմա. GENNubanaše > Նիւբալե դուգահեռը), ապա տվյալ դեպքում,
թերևս, կարող է կատարված լինել միևնույն երևույթը, այսինքն՝ GENŠeše
> *Šaša «այծքաղ», «այծեղջերու» նշանակությունն ունեցող լեռնանունը կա-
րող է թարգմանված լինել հայերեն, մի անուն, որը մեր կարծիքով, կրելու
էր Տարոնի Հյուսիս-արևելյան մասում գտնվող վերոհիշյալ լեռնաշղթան:

Նկատելի է նաև մի այլ հանդամանք: Սովորաբար, բնակավայրերի անուն-
ները կարող են փոխանցվել նրանց մոտ գտնվող լեռներին, սակայն կատար-
վում է նաև հակառակ երևույթը, այսինքն՝ Լորեմն լեռների անունները կա-
րող են փոխանցվել նրանց մոտակայքում՝ ստորոտում կամ լանջին կառուց-
ված բնակավայրերին կամ ամրոցներին: Օրինակ, Կապույտ լեռն (սեւ յա-
ռաջ խաղաղին ի միջոց աշխարհին, մարտ հղեալ կռուին ընդ մեծ ամուրս
Կապույտ լեռին)²⁹¹. որի լանջին էլ հենց գտնվում էր ամուրե Կապույտ (այն
է՝ Արտազկես ամրոցը)²⁹² (Սմբատ արքան Քամրացեալ էր ի ձորն Արշարու-

283 YKII, № 36, առդ 10—11, № 37, առդ 3:

284 YKII, էջ 405 (որտեղ se=si). NIIA, էջ 90:

285 IIWb, էջ 324:

286 YKII, № 127, II, առդ 16 (որտեղ le=li, li=le, ne=ni) և այլուր:

287 KIB, XXIII, № 72, Rs, առդ 37 (որտեղ li=di):

288 Բ. Խ. Հակոբյան, Հայաստանի պատմական աշխարհագրություն, Երևան, 1968, էջ 168:

289 IIWb, էջ 18:

290 նույն տեղում:

291 Եղիշե, էջ 125:

292 «Հայ մոզորդի պատմություն», հ. III, Երևան, 1976, էջ 39, 276:

նեաց յամուրն Կապոյտ կոչեցեալ»²⁹³։ Աւմագի (𐎠𐎼𐎡𐎹) լեռն²⁹⁴, որ հայտնի է նաև հայ մատենագրության մեջ որպես Աւմագ լեռոն («Իսկ Քարթլոս գնաց ի լեռոն, որ կոչի Աւմագ», «և եղ պարիսպ յԱւմագ լեռնէ մինչև ցգետն Կուր»)՝²⁹⁵ և հենց նույն տեղում գտնվող Աւմագի (𐎠𐎼𐎡𐎹) քաղաքը²⁹⁶։

Այսպիսով, եթե լեռան անունը կարող էր հարատևել այնտեղ կառուցված ամրոցի անվան մեջ, ապա GĒNŠeše > *Šaša լեռան անունը, եթե այն կապ ունենար šaša- (UDUKUR·RA) «այծքաղ», «այծեղչերու» բառի հետ, ապա թարգմանաբար կարող էր հարատևել այնտեղ կառուցված որևէ ամրոցի անվան մեջ։ Նման մի ամրոց 1056 թ. դեպքերի կապակցությամբ մատնանշվում է հենց հիշյալ լեռնաշղթայի վրա, Մեղտիի մոտակայքում։ «Խաբանօք էառ զամուրն Ծղանց բերդ կոչեցեալ»²⁹⁷, որը ավելի հնում՝ 604 թ. դեպքերի կապակցությամբ վկայված է հետևյալ ձևով. «յծղանց բերդն, զոր դեռ Ծղնուտն կոչեն»²⁹⁸։

Մեր կարծիքով, հիշյալ Ծղանց բերդը, որ բերված հատվածների համաձայն ավելի հնում կրել է Ծղնուտ անունը (իսկ սա արդեն ձևով միայն լեռան անուն կարող էր լինել), դեռևս իր մեջ պահպանել է Šaša «այծքաղ», «այծեղչերու» նշանակող բառի իմաստը՝ «եղն(իկ)», որից և Ծղնուտ > Ծղանց բերդ, քանի որ Ծղնուտ բերդի անունը, իրոք, ծագում է «եղնիկ» բառից²⁹⁹, որը հանդես գալով նաև Ողնուտ ձևով³⁰⁰, հարատևել է մինչև մեր օրերը³⁰¹, այն է՝ Ծղնուտ > Ողնուտ անցմամբ, այսինքն՝ ե > ո հնչյունափոխությամբ, որը վկայված է նաև այլ դեպքերում։ Օրինակ, աքքազ. KURMeḫri³⁰² (Ասորեստանից հյուսիս գտնվող ինչ-որ ցեղերի բավականաչափ ընդհանուր անուն)³⁰³, որը համապատասխանում է խեթ. KUR URU·LU·Me-cḫ-ri³⁰⁴ երկրին (ըստ Ն. Հարությունյանի)³⁰⁵, որը տեղորոշվում է Արևելյան Խաբուրի ակունքների մոտակայքում (ըստ Ն. Ադոնցի)³⁰⁶ և Ն. Հարությունյանի³⁰⁷ > հայ. Մոխրի (մեր եթապոթյամբ)։ «Բայց զանոյշ գինին Ասորոց (տարընթերցում՝ Խառանայ) և Սալնայ և զՄոխրայ այս Երկու տարի է յինէն կտրեալ էին»³⁰⁸,

²⁹³ Ստեփաննոս Օրբելյան, էջ 190, Բնադրում սխալմամբ գրված է ոչ թե Արարունեաց, այլ Աշորեեաց։

²⁹⁴ KIL I, էջ 8, 13, 19, 112.

²⁹⁵ Ստեփաննոս Օրբելյան, էջ 368, 369.

²⁹⁶ KIL I, էջ 9, 10, 13, 19, 43 և այլն. KIL II, էջ 494.

²⁹⁷ Արիստակէս Հասաիվերտցի, Պատմութիւն. Աշխատասիրությամբ Կ. Ն. Յուդրաշյանի, Երևան, 1963, էջ 106.

²⁹⁸ Հովհան Մամիկոնյան, էջ 24.

²⁹⁹ H. Hübischmann, նշվ. աշխ., էջ 423.

³⁰⁰ Հովհան Մամիկոնյան (տվյալ դեպքում 1889 թ. հրատարակություն), էջ 25, ծան. 4.

³⁰¹ «Турция», М., 1973 (քարտեզ)։ Այստեղ Ողնուտ բնակավայրի անունը կամ դրափոխությամբ, կամ գուցե վրիպակով տպված է Ողունու։

³⁰² ABIIIU, № 3, 6—8, 13, 20, 21.

³⁰³ ABIIIU, № 3, ծան. 3.

³⁰⁴ KUB, IV, № 14, II, տող 68.

³⁰⁵ В. Н. Хачатрян, նշվ. աշխ., էջ 106, ծան. 251.

³⁰⁶ ՀՊ, էջ 69.

³⁰⁷ БУ, էջ 58, 59, 60, 65, 362, 369.

³⁰⁸ Հովհան Մամիկոնյան (նույնպես 1889 թ. հրատարակություն), էջ 40 և ծան. 1.

Այսպիսով, GENSeSe > Saša (-այծթաղ, յայծեղչերու) իմաստով լիո) — *նղնու լիո (թարգմանաբար), որը հետադաշում հարատևում է այն-տեղ կառուցված նղնուս ամրոցի անվան մեջ:

Հետևաբար, Թիգլաթպալասար I-ը եփրատի (իմա՝ Արածանիի) ավազանում մտնելով նրա միջին հոսանքների շրջանը, բնականաբար, տեսնելու էր (սլալալիս լիո, որ նա անսլալման նրա զաղաթը բարձրանար) GENNuba-nāš: > Բիւտին լիո, իսկ վերադարձին URUMellīu (URUMellīa > Մեղտի չասած անցնելու էր GENSeSe (*Saša) > *նղնուս լեռան վրայով: Սա ինքնաստիճանից ցույց է տալիս Թիգլաթպալասար I-ի գործողության շրջանը, որը փաստորեն համընկնում է Արածանիի միջին և մասամբ վերին հոսանքների շրջանին: Այլ կերպ չէր էլ կարող լինել, նախորդ՝ մ. թ. ա. 1113 թ., Թիգլաթպալասար I-ը նվաճել էր Արածանիի ստորին հոսանքների շրջանում գտնվող Խսուս կրկիրը³¹⁰: Բնականաբար, անհրաժեշտ էր նվաճել կամ զոնել ավարի ենթարկել նրա շարունակությունը, այն է՝ Արածանիի միջին և վերին հոսանքների շրջանը:

Վերևում ասվեց, որ այդ արշավանքի ընթացքում Թիգլաթպալասար I-ը պարտության է մատնել նախրիի 23 երկրների միացյալ ուժերին, որոնք ընկած էին Ուդումե (KURU+du-me) — Դալանու (KURDaJaenu) գծի վրա կամ այդ գծի շրջակայքում: Այս տարածքը ավելի լավ պատկերացնելու համար անհրաժեշտ է տեղորոշել նաև ավելի Ուդումե (KURU+du-me) երկիրը, որը տեղադրվում էր Խսուսից արևելք: Այստեղ մեզ օգնության է հասնում անտիկ աղբյուրների տվյալներից մեկը, որտեղ Արտաշես I-ի (189—160 թթ. մ. թ. ա.) ժամանակակից Զարհի մասին ասված է, որ նա իշխում էր Մոփք (Մոփք), Ակիսունե (Ափսունե), Օդոմանտիս (Օծոմանտիս) և մի քանի այլ գավառների մրա³¹⁰:

Նրանք նկատի ունենանք՝ այն հանգամանքը, որ թվարկված գավառների շարքում առաջինը հիշատակված է Մոփքը (Մոփք), ապա, բնականաբար, ոչուսների գտնվելու էին նրանից արևելք, բնդ որում, Օդոմանտիսը (Օծոմանտիս) ավելի ետ: Նրանք մեր ենթադրությունը հավանական համարվի, ապա կարելի է կարծել, որ անտիկ աղբյուրների հիշյալ գավառը տեղով ու անվամբ համապատասխանում է սեպագիր աղբյուրների Ուդումե (KURU+du-me) երկրին՝ Udu-me (հավանաբար, *Odome հնչմամբ) > Odomantis (Օծոմանտիս):

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ Թիգլաթպալասար I-ի հիշատակած նախրիի 23 երկրների գտնվում էին Արածանիի ավազանում, նրա միջին և վերին հոսանքների շրջանում, Ուդումե (KURU+du-me, Օծոմանտիս) — Դալանու (KURDaJaenu, ԴԴԴալա < *KURDaJaenu) գծի վրա կամ այդ գծի շրջակայքում:

Հետևաբար, եթե ճիշտ են ասորեստանյան աղբյուրների Դալանու (KURDaJaenu) երկրի՝ Արածանիի միջին և վերին հոսանքների շրջանում գտնվելու վերաբերյալ մեր դիտողությունները, ապա այն անհրաժեշտ է տար-

³⁰⁹ ABININ, № 10 (III, տող 88 և հետո):

³¹⁰ Strabo, XI, 14, 5.

րերակելու ուրարտական ազբուրներին Տեյավեխ (Tejavēhe) երկրից, որը գտնվում էր Ճորոխի ավազանում և այդ հիման վրա տարբերակել նաև Դա-
լանու և Տեյավեխ երկրների՝ սխալմամբ միաձուլված-միահյուսված պատ-
մությունը:

СТРАНА ДАЙАЕНУ КЛИНОПИСНЫХ ИСТОЧНИКОВ

ОВАНЕС КАРАГЕЗЯН

Резюме

Страна Дайаену ассирийских источников обычно сопоставляется со страной Тейавехе урартских источников (традиционное, несобоснованное чтение данного названия Днаухи) и локализуется в бассейне реки Чорох, на месте древнеармянской области Танк. Однако если страна Тейавехе действительно находится в бассейне реки Чорох и от данного названия происходит название древнеармянской области Тайк, то в таком случае страна Дайаену ассирийских источников не имеет ничего общего со страной Тейавехе и локализуется в бассейне реки Арацани, на месте урартской страны *Даннала, название которой сохранено в названии реки Данилатине (верхнее течение реки Арацани).

Подобное решение вопроса обосновывается как историко-географическими данными, параллельными уточнениями локализаций ряда географических пунктов, так и лингвистическим анализом названий указанных стран и других топонимов.